

74.0
G 214

ԱԼԲԵՐՏ ՆԱԼԶԱՋՅԱՆ

ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ


11536-

Պրակ երկրորդ

- * Նախնադարյան էթնոմանկավարժություն և էթնոգենեզ
- * Մոզություն և էթնոմանկավարժություն



ԵՐԵՎԱՆ 2002



ՀՏՂ 37 (091)(07)
ԳՄԴ 74.00g73
Լ 214

ԱԼԲԵՐՏ ՆԱԼՉԱՋՅԱՆ

Լ 214 Էթնիկական մանկավարժություն: Բուհական դասագիրք: Պրակ 2:
Եր.: «Զանգակ-97», 2002, , 48 էջ:

Լ 4303000000 2002
0003(01)-2002

ԳՄԴ 74.00g73

ISBN 99930-2-392-2

© ՆԱԼՉԱՋՅԱՆ Ա., 2002 թ.
© «Զանգակ-97», 2002 թ.

ՆԱԽԱԲԱՆ

«Էթնիկական մանկավարժության» ներկա՝ երկրորդ պրակը նվիրված է Հիմնականում էթնոսների նախնական կրոնական պատկերացումների և մանկավարժական մշակույթի կապին: Ցույց է տրվում, որ մարդկության կրոնական և խորհրդապաշտական պատկերացումներում միշտ որոշակի տեղ են ունեցել նաև նոր սերունդների կրթության և սոցիալականացման հարցերը, թեև ոչ միշտ բացահայտորեն, լիովին զիտակցված ու մանրամասնորեն մշակված ձևով:

Մինչև մոնոթեիստական համաշխարհային կրոնների ծագումը ևս գոյություն են ունեցել դաստիարակության մասին պատկերացումներ, բայց զարգացած ու մանրամասնորեն մշակված կրոնական գաղափարախոսություններում դրանք ավելի հստակ են և հաճախ անվերապահ (կատեգորիկ) պահանջների ձև են ընդունում: Կա ևս մեկ տարբերություն. եթե համաշխարհային կրոնի կազմակերպչական ձևը՝ եկեղեցին, ստեղծում է ուսուցման համար նախատեսված հատուկ հաստատություններ՝ դպրոցներ, ապա բազմաստվածություն դավանող էթնոսներից շատերը (բայց ոչ բոլորը) նոր սերունդների կրթությունն ու դաստիարակությունն իրագործել են գործնական աշխատանքում, մեծահասակների գործունեությունը զիտելու կամ նրանում մասնակցելու ճանապարհով և, ուրեմն, սեփական անձնական փորձի հիման վրա:

Այստեղ ևս, ինչպես և սույն գրքի առաջին պրակում, շարադրանքը համառոտ է, մատչելի, բայց նաև հետազոտական ու պրոբլեմային. բնագավառը նոր է, և շատ խնդիրներ այստեղ գուցե առաջին անգամ են ձևակերպվում: Նրանք նոր հետազոտություններ են պահանջում, և ես հուսով եմ, որ այս գործը շարունակողների մեջ են նաև այսօրվա մեր երիտասարդ ընթերցողները:

Ալբերտ Նալչաջյան
Մայիս, 2002 թ.

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԷԹՆՈՍԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԹՆՈԳԵՆԵԶ

1. ԳԻՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԷԹՆՈՍՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Այս խնդիրը քննարկենք Մելանեզիայի բնիկների մասին հայտնի տվյալների հիման վրա, քանի որ այս էթնոսների մասին բավականին բան է հայտնի ժամանակակից գիտությունը:

Այն, թե գիր ու գրականություն չունեցող ցեղերն ինչպես են սոցիալականացնում իրենց նոր սերունդներին, շատ մանրամասնորեն նկարագրել է հայտնի մարդաբան և էթնոլոգ Բրոնիսլավ Մալինովսկին իր «Առասպելը պրիմիտիվ հոգեբանության մեջ» աշխատության էջերում: Այդ հայտնի մարդաբանը XX դարի սկզբներին մի քանի տարի ապրել է Մելանեզիայի բնիկների շրջանում, մանրամասնորեն ուսումնասիրել է նրանց կրոնական հավատալիքներն ու ֆոլկլորն ընդհանրապես և շատ արժեքավոր աշխատություններ է գրել այդ էթնոսների մասին¹: Այստեղ մեզ հետաքրքրում է այն, թե ժողովրդական ստեղծագործության ֆոլկլորի միջոցով մեղանեզիական ցեղերն ինչպես էին ապահովում նոր սերնդի սոցիալականացումը: Պետք է նշել, որ այդ ցեղերը գիր և գրականություն չունեին և իրենց մշակույթը պահպանում էին միայն հիշողությամբ:

Նրանք ունեին բանավոր պատմությունները երեք հիմնական տեսակ՝ կախարդական պատմություններ (հեքիաթներ), լեգենդներ և առասպելներ (միֆ, մյութոս):

Նոյեմբերի վերջերին, երբ կղզիներում սկսվում էր անձրևային շրջանը, տեղաբնիկները շատ ազատ ժամանակ էին ունենում, երեխաները հավաքվում էին խարույկների շուրջ և սկսում էին կախարդական պատմություններ պատմել ու լսել: Հմուտ պատմողները դրանք ներկայացնում են թատերականացված ձևով, իսկ ունկնդիրները, նրանց ապ-

րումակցելով, ծիծաղում են, տխրում, ուսլիկներ անում: Համայնքի յուրաքանչյուր անդամ իր պատմվածքն ունի, այն նրա սեփականությունն է համարվում ու թեև հայտնի է էթնիկական համայնքի անդամներից շատերին, բայց միայն իր «տերն» իրավունք ունի պատմել այն: Բայց նա իրավունք ունի նաև սովորեցնել այդ պատմությունը ուրիշին և թույլ տալ, որ նա սլատմի, այսինքն՝ այսպես ասած, ժառանգել ուրիշին: Գլխավոր նպատակներից մեկը ուրախ տրամադրություն առաջ բերելն է: Դրա համար էլ պատմողը պետք է կարողանա փոփոխել իր ձայնը, արտահայտիչ շարժումներ և դիմախաղ օգտագործել, արտիստական ընդունակություններ հանդես բերել: Այս պատմվածքներում դրսևորվում են ցեղի մարդկանց պատկերացումները արդարություն, քաջություն և բարոյական այլ կատեգորիաների մասին, բայց միշտ կանկրետ պատկերների օգնությամբ: Այդ հեքիաթներում դեերը և չար մարդիկ միշտ պատժվում են, իսկ արդարները՝ հաղթում:

Օրինակ՝ մի տղամարդ, որը երեք երեխա ունի, այլ գործի դնալով, անզգուշորեն երեխաներին թողնում է իր մարդակեր զոքանչի խնամքին: Պառավը փորձում է ուտել երեխաներին, բայց նրանք կարողանում են փախչել ու բարձրանալ արմավենու վրա՝ մոտ չթողնելով մարդակերին:

Ի վերջո դալիս է հայրը և սպանում է այդ մարդակեր տատիկին²: Ահա թե հնագույն ժամանակներից ինչպիսի պատկերացումներ են գոյություն ունեցել զոքանչների մասին: «Զոքանչագիտություն» և էթնոմանկավարժության հետ նրա կապի մասին այս գրքում մենք դեռ էլի ենք խոսելու:

Ենթադրվում է, որ նման պատմվածքները, ներկայացվելով միայն տվյալ էթնիկական համայնքի առջև և միայն նրա «տիրոջ» կողմից, նպատակ ունեն համախմբելու էթնոսի անդամներին:

Երկրորդ տեսակի պատմությունները՝ լեգենդները, իմ կարծիքով, է՛լ ավելի մեծ սոցիալականացող՝ կրթող և դաստիարակող նշանակություն ունեն: Սրանք ավելի ճշմարիտ են համարվում, քան հեքիաթները, նրանցում ներկայացվող տեղեկություններին ավելի մեծ նշանակություն են տալիս: Այս լեգենդները տարեց մարդիկ պատմում են երիտասարդներին ճանապարհորդությունների ընթացքում, երբ այցի են

¹ St u Malinovsky B., Магия, наука, религия, М., 1998, с. 94—105.

² St u St u. աշխ., էջ 101:

գնում որևէ Հեռավոր գյուղ կամ ծովային ճանապարհորդութեան են դուրս գալիս՝ Հանդիպելով նոր մարդկանց, նոր բարքերի ու վայրերի: Երիտասարդները, զարմանալով, բազմաթիվ Հարցեր են տալիս, իսկ մեծահասակները նրանց պատասխանում են նոր լեզուներով: Մեր մարդը կարող է պատմել նաև իր կյանքում ունեցած փորձությունների մասին՝ պատերազմների, մոգություն, տնտեսական գործերում ունեցած նշանակալի Հաջողությունների մասին: Սա մեզ Հիշեցնում է, օրինակ, պատերազմի և աշխատանքի վետերանների Հետ կազմակերպվող Հանդիպումները, որոնք մեղանում նույնպես էթնոմանկավարժական որոշ նշանակություն ունեն:

Այս տեղեկություններին տարեցները կարող են ավելացնել նաև այնպիսիները, որոնք նրանք իմացել են իրենց Հայրերից և նախորդ սերունդներից: Դրանք արդեն ավանդական պատմություններ են: Այդ բոլոր տեսակի պատմությունների բովանդակությունը շատ բազմազան է՝ պատերազմներ, մոգություն, երաշտ, ջրհեղեղ, Հանցագործություններ, Հայտնի պարոզների վարպետություն Հմայքը, այլ կղզիներում Հայտնվելն ու մարդակերների և այլ սարսափելի էակների Հանդիպելը և այլն: Կան նույնիսկ պատմություններ այն մարդարեների գործերի մասին, ովքեր եղել են մեռյալների աշխարհում:

Այս բոլոր պատմվածքները բնիկներն անվանում են մեկ բառով՝ լիբվոգո, թեև Բ. Մալինովսկին դրանք բաժանում է խմբերի՝ պատմական եղելություններ, լեզուներ և ուրիշներից լսած պատմություններ: Դրանք բոլորը ճշմարիտ են Համարվում և վերաբերում են բնիկների Համար նշանակալից, կենսականորեն կարևոր երևույթների և խնդիրների: Նրանցում Հաճախ պատմվում է Հերոսների մեծ Հաջողությունների և նվաճումների մասին, ինչը ոչ միայն մեծացնում է պատմողի հեղինակությունը (ինչպես նկատել է տալիս Բ. Մալինովսկին), այլև, իմ կարծիքով, օգնում է, որպեսզի երիտասարդ սերունդը Հոգեբանորեն նույնանա այդ անձնավորությունների Հետ, և ինքն էլ մեծ նվաճումների ձգտի: Փառաբանելով այդ Հերոսներին՝ նրանք փառաբանում են իրենց տոհմը, կյանք կամ ցեղն ամբողջությամբ, քանի որ այդ մեծ գործերի հեղինակները կամ իրենք են՝ պատմողները, կամ նրանց Հայրերն ու պապերը, կամ ցեղի նախնիները: Այս էթնոհոգեբանական և անձնական մոտիվացիան էլ Հենց նպաստում է, որպեսզի նման պատմությունները լավ մտապահվեն: Սովորաբար կոնկրետ ցույց է տրվում նաև, թե

որտեղ են կատարվել այդ իրադարձությունները, որ տոհմերն ու կյաններն են մասնակցել դրանց:

Ինչպես տեսնում ենք, լեզուներն ու իրենց բնույթով դրանց շատ մոտ պատմությունները. ա) սոցիալականացնում են նոր սերունդներին, նպաստում նրանց Հոգեբանական նույնացմանը տոհմի, կյանի և ցեղի Հետ, բ) նրանց մեջ նվաճման մոտիվացիան են առաջ բերում, գ) նպաստում են նրանց Հիշողության և երևակայության զարգացմանը, այսինքն՝ որոշակի ուսուցողական (գիղակտիկ) նշանակություն ունեն, սովորեցնում են նաև ցեղի պատմությունը: Ահա թե ինչու այժմ էլ, զարգացած ազգերի միջավայրում, էթնիկական լեզուները (կամ էթնոլեզուները, այսինքն՝ նրանք, որոնք վերաբերում են տվյալ էթնոսի ծագման պատմությանը) կարող են լայնորեն օգտագործվել նոր սերունդների սոցիալականացման գործում: Մեր Հայրենի լեզուները, որքանով որ դրանք պահպանվել են, իրենց մեջ կրթադաստիարակչական մեծ ներուժ ունեն և պետք է ներկայացվեն երիտասերին, Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում:

Սոցիալականացնող էլ ավելի մեծ նշանակություն ունեն միջերը՝ առասպելները, որոնք բանավոր մշակույթի նախորդ երկու ձևերից տարբերվում են նրանով, որ սրբազան են Համարվում՝ կազմելով նախնադարյան էթնոսների մշակույթի կորիզը: Առասպելները կանխորոշում են տվյալ էթնոսում ընդունված ծեսերը, բարոյականությունն ու Հասարակության կազմակերպման ձևերը՝ տոհմերի և կյանների սոցիալական դիրքերը և դրանց փոխհարաբերությունները:

Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր ժողովրդի կյանքի այն Հատվածում, որտեղ առասպելները վճռական դեր են խաղացել, նրա կողմից բարձր գնահատվող արժեքների մասին մեծ կարող ենք պատկերացում կազմել Հենց այդ առասպելների Հիման վրա: Առասպելներում ամենից հաճախ դրսևորվում է ժողովրդի Հավատն առ այն, որ կան անմահություն, Հավերժական երիտասարդություն, մահից Հետո՝ կյանք: Առասպելները վերաբերում են տվյալ էթնոսի ծագմանը, մարդու ծննդյան ու մահվան Հարցերին, մոգությունը: Ահա թե ինչու դրանց ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի ազգագիտության և էթնիկական հոգեբանություն Համար:

2. ՀԱՅՈՑ ԷԹՆՈԳԵՆԵՏԻԿ ԱՌԱՊԵԼԻ
ԱԶԳԱՅԻՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
(Հայկ նահապետի դասերը)

Հայոց էթնոգենետիկ առասպելը նահապետ Հայկի և նրա մեծագործությունների մասին հնամենի պատմությունն է, որը, արձանագրվելով Մովսես Խորենացու³ կողմից, հասել է մեզ և մեր ազգային ինքնազգիտակցության հիմքերից մեկն է հանդիսանում: Քանի կա Հայ ազգը, այդ առասպելը չի մոռացվելու և սիրված է լինելու ժողովրդի կողմից, քանի որ ունի սիմվոլիկ նշանակություն և ազգի ինքնազգիտակցությունն ու ինքնագնահատականը ձևավորելու ներուժ: Այս առասպելի էթնիկական արժեքը ցույց տալու նպատակով այստեղ տեղին է ևս մեկ անգամ շատ սեղմ շարադրել այն:

Ահեղ և երևելի են եղել առաջին աստվածները, որոնք պատճառ են դարձել բազմաթիվ բարիքների և երկրի բազմամարդություն: Աստվածներից սերեցին առաջին հսկաները՝ Հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք, ամբարտապանություն հասնելով, Հղացան աշտարակաշինության անօրեն գաղափարը: Նրանք ցանկացան Բաբելոնում բարձր աշտարակ կառուցել և հասնել Աստծուն: Աշտարակը ավարտին էր մոտենում, երբ աստվածների ցասումից ուժեղ մրրիկ է բարձրանում՝ կործանելով այն և մարդկանցից յուրաքանչյուրին մյուսներից տարբեր լեզուներ են տրվում, որպեսզի միմյանց չհասկանան: Այս հսկա մարդկանց մեջ էր նաև քաջ նախարար և Հզոր նետաձիգ Հայկը:

«Այս Հայկը,— գրում է Խորենացին,— ... վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բուրին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազուհուների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնատիրության դեմ, երբ մարդկային ցեղը սփռվում, տարածվում էր ամբողջ երկրի լայնություն վրա՝ բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժեղների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, կատաղած, սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էր մյուսներին տիրելու, երբ Բելին պատահամբ հաջողվեց բռնանալ և ամբողջ երկիրը գրավել: Հայկը, չկամե-

³ Տես Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, «Հայաստան», 1968: Տես նաև Հարությունյան Ա. Բ., Հայոց հին վիպաշխարհը, Երևան, «Արևիկ», 1987, էջ 44-49:

նալով սրան հնազանդվել: Բաբելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո չվեց գնաց Արարադի երկիրը, որ գտնվում է Հյուսիսային կողմերում՝ իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոժիններով, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով: Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը, նրանց իրեն հնազանդեցնելով, այնտեղ կալվածական բնակելի տուն է շինում և տալիս է ժառանգություն Կաղմոսին՝ Արամանյակի որդուն»⁴:

Մնացած մարդկանցով Հայկը շարժվում է դեպի Հյուսիս—արևմուտք և բնակություն է հաստատում մի բարձրավանդակում՝ այս սարահարթն անվանելով Հարթ, այսինքն թե՛ այստեղ բնակվողները թորգոմի տան սերնդի հայրեր են: Նա կառուցում է մի գյուղ՝ իր անունով Հայկաշեն անվանելով: Բայց Տիտանյան Բելը չի հանդուրժում Հայկի ազատատենչությունը և նրա մոտ իր հավատարիմ մարդկանցից պատվիրակ է ուղարկում, որպեսզի նրան համոզեն հնազանդվել իրեն: «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ... սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր, որտեղ որ կհաճես իմ երկրում բնակվելու»: Հայկը խստորեն մերժում է Բելին և հետ է ուղարկում նրա պատգամավորներին:

Բելը, մեծ զորք ժողովելով, գալիս հասնում է Արարադ երկիրը, ուր բնակություն էր հաստատել Կաղմոսը: Վերջինս, նահանջելով, սուրհանդակ է ուղարկում Հայկին, թե՛ Բելը մեծամեծ քաջերի բազմությունը իր վրա է գալիս, թող մտածե, թե ինչ է անելու: «Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ, գեղագանգուր ու զվարթաչյա հսկան շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշ մարդկանց, որ իրեն էին ենթարկվում, դնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերը աղի են և իրենց մեջ մանր ձկներ են պարունակում:

Թշնամի բանակները դեմ դիմաց կանգնած պատրաստվում են մարտի և առաջ են շարժվում: «Եվ երկու կողմի հսկաները, միմյանց հասնելով, երկրի վրա ահագին դղրդուն բարձրացրին իրենց գրոհներով և իրար վրա ահ ու սարսափ զցեցին իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ, սրի բերանի հանդիպելով,

⁴ Աշվ. աշխ., էջ 86:

Թավալվում, ընկնում էին գետին, իսկ ճակատամարտը երկու կողմից էլ անլուծելի էր մնում: Այս անսպասելի դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և ետ-ետ քաշվելով՝ սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատ կազմի: Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով, իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում, և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվում, ընկնում է գետին ու շունչը փչում: Իսկ ամբոխը, այս մեծ քաջագործությունը տեսնելով, փախչում է ամեն մեկը իր երեսը դարձած կողմը...

Բայց ճակատամարտի տեղը հաղթական պատերազմի պատվին շինում է դաստակերտ և անունը դնում է Հայք: Այս պատճառով գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր: Իսկ այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ ասվում է Գերեզմանակ: Բայց Բելի դիակը... դեղերով դմուսելով՝ Հայկը հրամայում է տանել Հայք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք»⁵: Այնուհետև պատմահայրը նկարագրում է, թե ինչպես են Հայկի ժառանգները աստիճանաբար բնակեցնում շրջապատող տարածքները և հայկական նախարարական տների սկիզբը դնում: Այսպես, մի քանի սերունդների կյանքի ընթացքում, ստեղծվում է հայկական մեծ երկիրը, որի գրեթե բոլոր բնակավայրերը, ըստ խորենացու, կոչվել են իշխանների, սպուհների և հերոսների անուններով:

Այս առասպելը, հատկապես այն մասում, որը վերաբերում է հայկական տոհմերի, ցեղերի ու նախարարական տների առաջացմանն ու տարածմանը, այնքան բնականոն մի էթնոգենետիկ (ազգաստեղծ) ընթացք է նկարագրում, որ չես կարող չհամաձայնել առասպելների մասին այն տեսակետի հետ, թե դրանք իրական, պատմական անցքերի նկարագրություններ են:

Ի՞նչ է սովորեցնում մեզ Հայ ազգի ստեղծման մասին այս առասպելը, ինչպիսի՞ էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական գասեր է մեզ

տալիս Հայկ նահապետի և նրա ժառանգների գործունեությունը: Այն մեղ ցույց է տալիս, որ ազգի կողմից դավանվող հիմնական արժեքները պետք է լինեն՝ անկախություն, ազատություն, հայարտություն, քաջություն, վեհանձնություն և ազգասիրություն, հայրենիքը զենքի ուժով պաշտպանելու և նրա սահմանները ընդլայնելու արիություն, միմյանց օգնություն հասնելու պատրաստակամություն: Փաստորեն, մեր առջև ունենք մեր ազգի արժեքային համակարգի կորիզը, որը ձևավորվել է դեռևս հնագույն ժամանակներում՝ Հայ էթնոսի ձևավորման սկզբնական շրջանում: Կասկած չկա նաև, որ այս առասպելը արժեքավոր տվյալներ է պարունակում հայ էթնոսի ձևավորման՝ էթնոգենեզի սկզբնական փուլի և նրա մեխանիզմի մասին՝ տոհմի ընդլայնում և ցեղի առաջացում, ցեղի բաժանում երկու կամ ավելի ցեղերի և սրանց կողմից նոր տարածքների դբադեցում և այդպես շարունակ՝ մինչև միատարր էթնիկական կազմ ունեցող մեծ պետության ստեղծում: Թեև, պետք է ասել, որ հայկական ցեղերի կենտրոնական կառավորումը այս առասպելում ամենայն հստակությամբ ներկայացված չէ:

Մյուս շատ կարևոր երևույթը, որ մենք տեսնում ենք այս առասպելում, հայ էթնոսի առաջին սիմվոլների ստեղծումն է: Սկզբում սիմվոլացվում են Հայկ նահապետի անձն ու նրա գործերը, ապա և նրա առավել հաջողակ հետնորդները: Առաջին սիմվոլները, այսօրվա լեզվով ասած, պրոյեկտիվում են էթնիկական տարածքի վրա՝ իրենց անունները շնորհելով տեղանքին ու նոր բնակավայրերին: Նորանոր տարածքներ են հայացվում այդպիսի էթնոգենետիկ պրոյեկցիայի, յուրահատուկ հոգեբանական ճառագայթման միջոցով: Տարածքը սկսում է հայկական ոգի կրել իր մեջ:

Վերջապես, ինչպես հենց սկզբից ասացի, այս առասպելն ու նրա հերոսները նպաստում են հայ էթնոսի և յուրաքանչյուր հայ մարդու էթնիկական ինքնագիտակցության ձևավորմանն ու զարգացմանը և այս իմաստով մինչև այժմ էլ պահպանում է իր էթնոգենետիկ (ազգածին) արժեքը: Այն էթնիկական սոցիալականացման հզոր միջոց է և պետք է հայտնի ու սիրելի լինի յուրաքանչյուր հայի:

Ահա թե ինչպիսի դասեր է մեզ տվել մեր էթնոսի մեծ հիմնադիրը՝ Հայկ նահապետը: Այս տեսակետի լույսի ներքո ցանկալի է լսարանում քննարկել և էթնոմանկավարժական տեսանկյունից մեկնաբանել մեր գլխավոր էթնոգենետիկ առասպելը:

⁵ Նշված աշխ., էջ 89:

3. ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Էթնոմանկավարժական գիտությունն ստեղծման և նրա պատմական զարգացման փուլերի առանձնացմանը էապես օգնում է Հայտնի մարդարան Մ. Միդի կողմից «մշակույթի», այսինքն, ըստ էության, էթնիկական Հանրույթների երկու տեսակի առանձնացումը.

1) այնպիսի էթնոմշակույթներ, որոնցում երեխաները գիտելիքներ և հմտություններ հիմնականում սովորում են իրենց սեփական փորձով, թեև մեծահասակների հսկողության տակ: Դրանք, Մ. Միդի բառերով⁶, այսպես կոչված սովորեցնող (և սովորող) հասարակություններն են (learning cultures),

2) ուսուցանող հասարակություններ (teaching societies) նա անվանում է էթնոմշակույթային այն հանրույթները, որոնցում գոյություն ունեն երեխաներին ուսուցանելու նպատակով ստեղծված հատուկ հաստատություններ:

Այս դասակարգումը օգտակար է ոչ միայն էթնոմանկավարժության և էթնոհոգեբանության, այլև էթնոգենեզի տեսության զարգացման համար: Դրանք, իմ կարծիքով, իրենցից ներկայացնում են էթնիկական հանրույթի պատմական զարգացման երկու փուլեր, ընդ որում, երկրորդը, անկասկած, զարգացման ավելի բարձր մակարդակ է: Դրերի գյուտն ու դպրոցների ստեղծումը նշանակում են, որ տվյալ էթնոսն անցավ իր զարգացման (էթնոգենեզի և էթնիկական էվոլյուցիայի) նոր, ավելի բարձր փուլ՝ նացիոգենեզի (ազգի առաջացման) ավելի բարձր մակարդակ:

Այս տեսակետից դիտելու դեպքում կարող ենք ասել, որ մ.թ. V դարի առաջին կեսին, երբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց Հայոց գիրը և բացեց առաջին բուն Հայկական դպրոցները, Հայ ազգն սկսեց անցում կատարել իր զարգացման՝ նացիոգենեզի մի նոր ու որակապես ավելի բարձր աստիճանի:

Իհարկե, մանկավարժական մտքի և պրակտիկայի պատմությունն ուսումնասիրող մասնագետների համար Մ. Միդի վերը հիշատակված տեսակետն առանձնապես նորություն քիչ է պարունակում: Ուսումնասիրելով դաստիարակության և դպրոցի պատմությունը՝ նրանք նկատել են, որ կարելի է առանձնացնել մանկավարժության պատմու-

թյան երկու փուլ՝ այսպես ասած «մինչդպրոցական» և դպրոցների ստեղծման փուլ: Ահա թե ինչ է գրում Հայ մանկավարժական մտքի պատմության քաջ գիտակ Յ.Ռ. Միմոնյանը. «Նախնադարյան Համայնական հասարակարգերում չեն գործել ուսումնադաստիարակչական հաստատություններ, ուսուցումն ու դաստիարակությունը տեղի են ունեցել ամենօրյա կյանքում, համատեղ աշխատանքի պրոցեսում, մեծերի և փոքրերի շփման, աշխատանքային նույն գործողությունների կատարման ժամանակ, երբ, անկասկած, հաշվի են առնվել թե՛ սեռային և թե՛ տարիքային առանձնահատկությունները: Ընդօրինակումը մեծ տեղ է ունեցել աշխատանքային հմտությունների և ունակությունների ձեռքբերման գործում, սակայն այն չի եղել կուլյր ընդօրինակում և ծառայել է որոշակի նպատակների: Ոչ պակաս դեր ու նշանակություն է ունեցել նաև մեծերի կանխամտածված ներգործությունը փոքրերի նկատմամբ, որը նախնական պարտադրված ուսուցման եղանակ, ձև կարելի է համարել»⁷:

Հեղինակը միանգամայն իրավացիորեն նկատել է տալիս, որ եթե հին Հայաստանում կային զարգացած արհեստներ, հողագործություն, որսորդություն, ռազմական գործ և մարզկային գործունեության այլ տեսակներ, ապա միանգամայն ընական է, որ ինչ—որ մարդիկ դեռահասներին և պատանիներին պետք է սովորեցնեին դրանք. դպրոցներ այսօրվա մեր ըմբռնմամբ չեն եղել, բայց սովորեցնելու գործընթաց և աշակերտ—ուսուցիչ հարաբերություններ գոյություն են ունեցել: «Կասկածից վեր է,— գրում է նա,— որ դաստիարակության հիմնական եղանակները եղել են աշխատանքայինը և ռազմաֆիզիկականը: Որսորդության, անասունների խնամքի, հողագործության, արհեստագործության, տնարարության, ռազմախաղերի, ռազմարշավների, խաղերի և այլնի ժամանակ փոքրերին տվել են անհրաժեշտ ցուցումներ, խորհուրդներ և սովորեցրել ու պատրաստել ակտիվ գործունեության, որով նրանք իրենց գործուն մասնակցությունն են ցույց տվել հասարակական կյանքի այլազան ասպարեզներում: Այսպիսով՝ դաստիարակությունը նպատակ է հետամտել պատրաստել կյանքի հարուցած խոչընդոտները հաղթահարող աշխատունակ ու աշխատասեր որսորդ. անասնապահ, հողագործ, արհեստավոր, տնտեսուհի և, անկասկած, ռազմիկ, որ ի վիճակի լինի մասնակցելու ռազմարշավներին և անհրաժեշտու-

⁶ Տե՛ս Мид М., Культура и мир детства, М., 1988.

⁷ Միմոնյան Յ.Ռ., Հայ մանկավարժության պատմություն, Երևան, 1998, էջ 13:

թյան ղեկավարում պաշտպանելու իր ընտանիքն ու համայնքը հնարավոր հարձակումներից»⁸:

Մինչև հայերեն գրերի ստեղծումն ու Մեսրոպ Մաշտոցի կողմից հայկական դպրոցների հիմնումը այլ, այսպես կոչված մեհենական ուսումնական հաստատությունների գոյություն մասին մենք միայն ենթադրություններ կարող ենք անել: Դպրոցներ բացելն ու նրանցում ուսումնական գործընթաց կազմակերպելը փաստորեն նշանակում են նաև ինչ-որ չափով գիտական մանկավարժության սկզբնավորում, ժողովրդական մանկավարժությունից գիտականին անցնելու փորձ: Քանի որ հայերը մ.թ.ա. դեռևս II հազարամյակում արդեն ունեին պետություն, թագավորություն, որի գոյությունը ընդհատումներով շարունակվեց մինչև մ.թ. V դարի առաջին կեսը, ապա կարող ենք ենթադրել, որ հայկական էթնոսն արդեն անցել էր իր պատմության ազգաստեղծ (նացիոգեն) փուլին և որպես արդյունավետ տնտեսական, ռազմական և քաղաքական գործունեության ասպարեզ՝ պետք է ունենար նաև իր ուսումնական հաստատությունները: Թե ինչպիսին են դրանք եղել, մենք չգիտենք, բայց որ պետք է գոյություն ունենային, դրանում կասկած չի կարող: Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և այլ պատմիչների՝ քրիստոնեական հավատքի ջատագովների գործերում կցկտուր տվյալներ են մնացել այն մասին, որ գոյություն են ունեցել մեհենական դպրոցներ: Բայց թե դրանցում ինչ են ուսուցանել և ինչ եղանակներով, գրեթե հայտնի չէ: Այդ դպրոցները ոչնչացվել են նոր կրոնի սպասավորների՝ քրիստոնյաների կողմից⁹:

Բացի այդ, ենթադրվում է, որ մինչև մաշտոցյան գրերի ստեղծումն էլ, արդեն մ.թ.ա. I հազարամյակում, գոյություն է ունեցել հայերեն գիր և գրականություն: Այստեղ հնարավոր է համարվում երկու տարբերակ. ա) հայերն ունեցել են իրենց ուրույն տառերն ու զուտ հայկական գրականությունը, բ) հայերը գրել են իրենց լեզվով, բայց այլ լեզուների տառերով (հիմնականում հունական և ասորական): Այսպիսի եզրակացություն է հանգել դեռևս Ղ. Ալիշանը¹⁰:

⁸ Աշխ. աշխ., էջ 13-14:

⁹ Տե՛ս Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914: Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968:

¹⁰ Տե՛ս Ալիշան Ղ., Արշալույս քրիստոնեության հայոց, Կենտրոն, 1920: Տե՛ս նաև Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր զարգացման պատմություն, հ. 1, Երևան, 1959:

Հայաստանի հեթանոսական մեհեններում հայերեն գրեր են ստեղծվել, և տարբեր ժանրերի գրականություն է ստեղծվել, նույնիսկ այլ լեզուներից գրքեր են թարգմանվել հայերեն: Գոյություն է ունեցել ոմն Ուղյուժայ քրմի գրած «Մեհենական պատմություն», գրվել են դրամատիկ ստեղծագործություններ, էլ չենք խոսում բանաստեղծությունների մասին: Մ.թ.ա. I դարում Հայաստանում գործել են թատրոններ: Հելլենական ժամանակներում Հայաստանում բացվել են նաև հունական տիպի դպրոցներ, որոնցում դասավանդման լեզուն հունարենն է եղել: Ենթադրվում է, որ ազգային կարելի է անվանել այդ դարաշրջանների միայն այն դպրոցները, որոնք գործել են մեհեններում՝ ենթադրական մեհենական հայերենով:

Սակայն կրկնում ենք. դպրոցների ստեղծման բուն գաղափարն ու, առավել ևս, այդ ուղղությամբ կատարված գործնական աշխատանքը վկայում են, որ մ.թ.ա. I հազարամյակում հայ էթնոսը հասել էր դարգացման բավականին բարձր աստիճանի: Ինչ վերաբերում է Մեսրոպ Մաշտոցի կողմից հայերեն գրերի և դպրոցների ստեղծմանը, ապա այս գործը մենք պետք է դիտենք նաև էթնիկական ինքնապաշտպանության և ինքնագիտակցության զարգացման տեսանկյունից, խնդիրներ, որոնք V դարում հայ ազգի կյանքում դրված էին ամենայն սրությամբ: Այդ շրջանում ազգի լուսավորության և ընդհանրապես մանկավարժական մշակույթի ստեղծման խնդիրները գոյապահպանական նշանակություն ստացան¹¹:

4. ԷԹՆՈՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՆԱՍԲԻԿԱՐԱ ՑԵՂԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Որպես ժողովրդական մանկավարժական բավականին մշակված համակարգի օրինակ՝ դիտարկենք Բրազիլիայի կենտրոնական տափաստաններում բնակվող նամբիկվարա ցեղի երեխաների սոցիալականացման համակարգը: Ես այն նկարագրում եմ ըստ Ֆրանսիացի անվանի մարդաբան Կլոդ Լևի-Սթրոսի աշխատություններում ներկայացված ազգագ-

¹¹ Ազգային ինքնապաշտպանության և ինքնագիտակցության խնդիրների մասին տես իմ աշխատությունը՝ «Էթնիկական հոգեբանություն», Երևան, 2001:

րական նյութի, որին մենք կփորձենք էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական մեկնաբանություն տալ:

Այս ցեղի երեխաները մասնակցում են ծնողների, Հատկապես մայրերի աշխատանքային գործունեությանը: Նրանց հետ միասին արմտիք ու մրգեր են Հավաքում, մանր կենդանիներ են որսում: Բայց ժամանակի մեծ մասը նրանք անգործ են անցկացնում: Տղաները կամ ձուկ են որսում, կամ բորբոսի պարապ են մնում: Աղջիկները օգնում են մայրերին նրանց «տնային» գործերում:

Երեխաների թիվը ընտանիքներում փոքր է՝ 1-2 երեխա, հազվադեպ կարելի է տեսնել ընտանիքներ, որոնք երեք երեխա ունեն: Կան նաև ամուսնական զույգեր, որոնք երեխաներ չունեն: Մայրը երեխային կրում է իր ազդրի վրա, քանի որ մեջքը միշտ զբաղված է լինում ինչ-որ բեռով: Կուրծք տալիս են մինչև երկու տարեկանը, և այդ ընթացքում կինը սեռական հարաբերություններ չի ունենում. այդպիսի ավանդական արգելք (թարու) գոյություն ունի: Շատ տարածված է հղիության վաղաժամկետ ընդհատումը (աբորտը), որը կատարվում է մեխանիկական եղանակով կամ դեղամիջոցներով. կյանքի պայմանները ծանր են և թույլ չեն տալիս շատ երեխաներ ունենալ:

Չնայած դրան՝ հնդկացիական այս ցեղին պատկանող ծնողները շատ կապված են իրենց երեխաներին: Այդ հուզական կապը փոխադարձ է: Բայց այդ զգացմունքները միշտ չէ, որ դրսևորվում են. դիտվում են նաև երեխաների նկատմամբ անտարբերության դեպքեր: Կ. Լևի-Սթրոսը նկարագրում է, թե ինչպես է փոքրիկ տղան տառապում փորացավից, գանգատվում է, որ սրտխառնուք ունի, անընդմեջ քնել է ուզում, բայց նրա վիճակը կարծես թե ոչ մեկին չի հետաքրքրում: Միայն երբ վրա է հասնում գիշերը, մայրը, մոտենալով, իր գիրկն է առնում հիվանդ երեխային և սկսում է օրորել: Այսպիսի անտարբերությունը այդ ազգազետը բացատրում է նամբիկվարա ցեղի մարդկանց նյարդայնությունը և բնավորության անկայունությունը¹², սակայն բացառված չէ, որ այդպիսի վերաբերմունքը նաև անօգնականության հետևանք լինի. մեծահասակները պարզապես չգիտեն, թե ինչպես պետք է օգնել հիվանդությունից տառապող երեխային:

Այնուամենայնիվ, երեխաների նկատմամբ ազրեսիվությունն առկա է

և ոչ մի կասկած չի հարուցում: Երեխաների նկատմամբ ծնողների դիրքորոշումը բարդ է, երկարժեք (ամբիվալենտ): Դա մենք տեսանք Հենց նոր՝ ազրեսիվ անտարբերություն կարելի է անվանել այդպիսի վերաբերմունքը: Բայց ազգազետը մեզ տրամադրում է նաև ուղղակի ազրեսիվի օրինակ. երիտասարդ մայրը խաղում է երեխայի հետ՝ սկզբում քնքշությունով թմբթմբացնելով նրա մեջքին: Երեխան սկսում է ծիծաղել, իսկ մայրն այնքան է տարվում խաղով, որ ավելի ու ավելի ուժգին հարվածներ է հասցնում երեխայի մեջքին, մինչև որ նա սկսում է լաց լինել: Միայն այստեղ է մայրը դադարեցնում իր խաղը՝ այժմ արդեն սվոփելով դառնացած երեխային: Նրա վարքը հակասական է սաղիզմի տարրերով: Այդ ցեղի մարդիկ հատկապես անտարբեր ու զաժան են որբ երեխաների նկատմամբ:

Եթե վստահելու լինենք Լևի-Սթրոսի տվյալներին, նամբիկվարա ցեղի մարդիկ, այնուամենայնիվ, երեխաների նկատմամբ ֆիզիկական պատիժ հազվադեպ են կիրառում, թեև կատակով հաճախ են սպառնում, որ կծեծեն: Ավելին, երբ մայրն ինչ-որ հարցում հակազդվում է երեխային, ապա երեխան կարող է հարվածել մորը. այսպիսի դեպքերում մայրերը հազվադեպ են պատասխանում ազրեսիայով, նրանք հանդուրժում են փոքրիկների ազրեսիան: Փոքրիկ երեխաները մայրերից անբաժան են ինչպես բնակատեղիներում, այնպես էլ թափառումների ժամանակ: Բանի դեռ նրանք չեն սկսել քայլել, մայրերը նրանց շալակած են տանում: Իսկ քայլել սովորելուց հետո նրանք միշտ մոր կողքին են լինում:

Հետաքրքրական կողմեր ունի այս ցեղում երեխաների տարիքային սոցիալականացումը: Թե՛ հայրը, թե՛ մայրը հավասարապես կապված են երեխաներին, բայց գալիս է երեխայի մի տարիք, երբ նրանց վերաբերմունքը ընտրական է դառնում: Հայրը սկսում է ավելի մեծ ուշադրություն դարձնել տղային, իսկ մայրը՝ աղջկան: Հայրը տղային որսորդություն և փոքր, իր տարիքին համապատասխանող, բայց իսկական զենքեր կրել է սովորեցնում, տղային հաճախ դնում է ստերին ու ման է բերում: Երեխաներին Հենց հայրն է պատմում ցեղի լեգենդները, առասպելներն ու մյուս ավանդույթները, սակայն նրանց հայրը մատչելի, պարզեցված լեզվով: Այս ցեղը, օրինակ՝ առասպել ունի՝ համաշխարհային ջրհեղեղի մասին:

Երեխաները սոցիալականացման են ենթարկվում նաև տարեկիցների շրջանում: Այս ցեղում ևս տղաների և աղջիկների ենթախմբեր են ծա-

¹² Stéu Леви-Строс К., Печальные тропики, М., "Наука", 1984, с. 150.

գում: Նման խմբերում հարաբերությունները սերտ են, եթե խոսենք ժամանակակից սոցիալական հոգեբանություն լեզվով, դրանք առաջնային հարաբերություններ են, բայց ոչ այնքան նուրբ ու ջերմ: Երիտասարդ կանայք ու աղջիկները, երբ միասին են, հազվադեպ են փոխադարձ նրբազգացություն և միմյանց օգնության հասնելու պատրաստակամություն գրսևորում: Նրանք կատակում են, հաճախակի ծիծաղում, գերազատում են կոպիտ կատակները, օրինակ՝ հերթով թքելով միմյանց վրա և մրցության մեջ մտնելով այդ գործում: Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր էթնոսներում է վրան թքելը անպատվություն համարվում:

Շատ հետաքրքրական է, որ, ինչպես պնդում է Կ. Լևի-Սթրոսը, ամբիկվարա ցեղի երեխաները խաղեր չունեն: Ազգագետները գտնում են, որ այդ ցեղի մարդիկ ապրում են նոր քարի դարին բնորոշ կյանքով, և մենք այստեղից կարող ենք այն հետևությունը հանգել, որ խաղը էթնոսների զարգացման բավականին ուշ շրջանի արդյունք է: Թեև ես կարծում եմ, որ որևէ ցեղի երեխաների վարքում խաղի առկայության կամ բացակայության հարցը պետք է ավելի մանրամասնորեն ուսումնասիրվի և այն էլ՝ խաղի հոգեբանությունը լավ իմացող մասնագետների կողմից: Բանն այն է, որ բարձրակարգ կենդանիներն անգամ խաղում են. խաղալը ծրագրավորված է ժառանգական մեխանիզմներում և դրսևորվում է ինքնաբերաբար (բավական է դիտել կատուների կամ շների ձագերի խաղը): Մինչդեռ երեխաների խաղային, հատկապես դերային խաղերի միջոցով իրականացվող սոցիալականացումը շատ կարևոր ու տարածված երևույթ է, այն, պետք է կարծել, համամարդկային հատկություն է:

Այնուամենայնիվ, եթե կան էթնոսներ, որոնց երեխաները չեն խաղում կամ գրեթե չունեն խաղեր, ապա այս ցեղերի մարդկանց էթնիկական բնավորությունը չի կարող չտարբերվել այն էթնոսների բնավորությունից, որոնք ոչ միայն ունեն խաղեր, այլև երեխաներին խրախուսում են խաղալ: Տարբերություններ կարող են առաջ գալ նաև ըստ մտավոր ընդունակությունների, ըստ էմպաթիայի և այլն: Սրանք խնդիրներ են, որոնց ուսումնասիրությունները դեռևս պետք է զբաղվեն էթնոմանկավարժները:

Բացի ժառանգական և հոգեբանական գործոններից, կարիքն է ստիպում, որպեսզի երեխաները որքան հնարավոր է վաղ տարիքում սովորեն մեծերի աշխատանքն ու օգնեն նրանց: Պետք է նկատի ունենալ, որ նույնիսկ նամբիկվարա ցեղում և քարեդարյան մակարդակի վրա ապրող

այլ էթնոսներում դերային սոցիալականացումը, այնուամենայնիվ, զգալի դեր է խաղում: Մեծահասակների դերային վարքն ընդօրինակելը փաստորեն իր մեջ խաղային տարրեր է պարունակում, մի բան, որ այդպես չեն ըմբռնել Կ. Լևի-Սթրոսն ու այլ հետազոտողներ: Բայց նրանց ժողոված փաստերն ինքնին տպավորիչ են: Ահա դրանցից մեկը. «Անհրաժեշտ է առանձնահատուկ կերպով նշել այնպիսի ազգակցական կապերի մեջ գտնվող երեխաների հարաբերությունները, որոնք նրանց իրավունք են տալիս միմյանց «ամուսին» անվանել: Նրանք հաճախ իրենց պահում են ինչպես իսկական ամուսիններ: Երեխաները լքում են ընտանեկան օջախը և վառվող փայտերը տեղափոխում են ճամբարի անկյուններից մեկը. այստեղ նրանք, իրենց հնարավորությունների սահմաններում, հենց այնպիսի զգացմունքների են հանձնվում, ինչ և ավագները, իսկ մեծահասակները զվարճալից հայացքներ են նետում այդ տեսարանների վրա»¹³: Սա փաստորեն դերային խաղ է. փոքրիկները ամուսնական դերեր են սովորում:

Հետաքրքրական են երեխաների և կենդանիների հարաբերությունները: Բնությունը, ինչպես արդեն գիտենք, դաստիարակչական բավականին ուժեղ ազդեցություն է գործում անհատի վրա: Իսկ կենդանիները մարդուն շրջապատող բնության կարևոր մասն են կաղմում: Ինչպիսի՞ն են հարաբերությունները նամբիկվարա ցեղի երեխաների և կենդանիների միջև:

Նշենք, որ այդ ցեղի մարդիկ ունենին ընտանի կենդանիներ. կենդանիների ընտելացումը, հատկապես շների երևան դալը, ինչպես գտնում են հետազոտողները, քարի դարից է սկսվել: Նրանք կենդանիներին վերաբերվում են այնպես, ինչպես երեխաներին. կերակրում են, խոսում հետները և խաղում, գուրպուրում ու խնամում են: Բացի ընտանի շներից, նամբիկվարա ցեղի մարդիկ պահում էին նաև հավեր ու աքլորներ, կապիկներ, թռվածիկներ և այլ թռչուններ, ինչպես նաև խոզեր: Այս բոլոր կենդանիներից միայն շունն էր տնտեսական օգուտ տալիս, քանի որ կանանց հետ որսի էր դնում: Տղամարդիկ որսի գնալիս իրենց հետ շներ չէին վերցնում: Մյուս կենդանիները միայն զվարճության համար էին: Այդ մարդիկ նույնիսկ հավի միս ու ձվեր հաղվադեպ էին ուտում: Տեղից տեղ քոչելիս այդ ցեղի մարդիկ իրենց հետ վերցնում էին բոլոր կեն-

¹³ Леви-Строс К., Печальные тропики, с. 152.

դանիններին, իսկ կապիկներին կանայք դնում էին իրենց գլուխներին և այդպես «գարդարված» ճանապարհորդում:

Ինչպես տեսանք, խնդրո առարկա ցեղային համայնքում նպատակալայ սոցիալականացումն ու դաստիարակությունը չնչին տեղ են զբաղեցնում. երեխաների սոցիալականացման գրեթե ամբողջ գործընթացը կատարվում է որպես ինքնաբերական գործընթաց՝ մեծերի գերերը սովորելուն զուգընթաց: Եթե կրկին վերհիշենք Մ.Միդլի դասակարգումը, ապա կարող ենք ասել, որ այս ցեղն ապրում էր սովորեցնող (սովորող) հասարակարգում, բայց ոչ ուսուցանող: Բայց սոցիալականացման այսպիսի համակարգը հիմնականում ապահովում էր ցեղի մշակույթի և բնավորության էթնիկական տիպերի վերարտադրությունը: Արտաքին (օտար) ազդեցությունների բացակայության պայմաններում, մինչև եվրոպացիների ներխուժումը, այդ ցեղերն ու նրանց մշակույթները գոյատևել են հազարավոր տարիներ շարունակ:

5. «ՏՂԱՍԱՐԴԿԱՆՑ ՏՆԵՐԸ»

ԵԹՆԻԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ

Էթնոլոգներին քաջ հայտնի են այսպես կոչված «տղամարդկանց տները», որոնք գոյություն են ունեցել Հատկապես Ամերիկայի բնիկ ցեղերի միջավայրում: Դրանք մի շարք ֆունկցիաներ են կատարել, բայց այդ հիմնարկների էթնոմանկավարժական ֆունկցիան, որքան ինձ հայտնի է, անհրաժեշտ մանրամասնություններ չի ուսումնասիրվել:

Այս խնդիրը կոնկրետացնելու նկատառումով օգտվենք այն նկարագրությունից, որ Կ. Լևի-Սթրոսը տվել է Բրազիլիայում ապրող բորորո ցեղի գյուղին և նրանում՝ տղամարդկանց տանը: Նա մանրամասնորեն նկարագրում է այդ ցեղի սոցիալական կառուցվածքն ու բնակատեղին, որի կառուցվածքն արտացոլում էր ցեղի ներքին սոցիալական կառուցվածքը՝ տոհմերն ու դրանց փոխհարաբերությունները, կլանները, առաջնորդի դիրքն ու ֆունկցիաները և, ի վերջո, տղամարդկանց տունը, որի գոյությունը ցույց է տալիս, որ այդ ցեղում ձևավորվել է երիտասարդ սերնդին սոցիալականացնելու որոշակի ավանդույթ:

Գյուղի տնակները դասավորված են կիսաշրջանաձև: Կենտրոնում ամենամեծ տունն է՝ «տղամարդկանց տունը»: Ամուրիներն այստեղ են գիշերում, իսկ ցերեկները այստեղ են իրենց ժամանակն անցկացնում նաև մյուս տղամարդիկ, եթե զբաղված չեն որսորդությամբ, որևէ կրոնական ծեսով կամ ձկնորսությամբ: Այս ցեղի կյանքում հողագործությունը կանաց զբաղմունքն է: Կանայք, հատկապես ամուսնացածները, տղամարդկանց տուն մտնելու իրավունք չունեն: Ամուսնացած տղամարդիկ օրվա ընթացքում մի քանի անգամ գնում են իրենց տները և վերադառնում: Ամուսնանալիս տղամարդը տեղափոխվում է կնոջ տուն, այսինքն՝ ամուսնությունը «մայրատեղային» է: (Հայերեն եթե ասենք՝ ամուսնացած տղամարդը տնփեսա է դառնում): Բայց եթե այստեղ իրավիճակն իր համար տհաճ է, ապա կարող է գիշերել տղամարդկանց տանը:

Տղամարդիկ այդ տանը արհեստներ են սովորում, ընդ որում, հիմնականում պատրաստում են սեփական մարմինը զարդարելու համար նախատեսվող առարկաներ՝ զարդեր: Այսինքն՝ ինչպես Կ. Լևի-Սթրոսն է ասում, տղամարդկանց տունը նորաձևություն մի տեսակ արհեստանոց է (ատելյե): Տղամարդիկ հաճախ հենց այստեղ էլ սնվում են. տոհմերից յուրաքանչյուրը պարտավոր է հերթականությամբ սնունդ մատուցել այդ տան բնակիչներին և այլ ծառայություններ կատարել: Ծառն իրենց տներում կանայք են պատրաստում, բայց բերում և բաժանում են տղամարդիկ, քանի որ կանայք, ինչպես ասացինք, տղամարդկանց տուն մտնելու իրավունք չունեն: Միայն դեռահաս աղջիկները կյանքում մեկ անգամ կարող են մտնել այնտեղ՝ իրենց ապագա ամուսնուն ընտրելու համար:

Այս ամենը նկատի առնելով՝ կարելի է ասել, որ տղամարդկանց տունը արական սեռի ներկայացուցիչներին սոցիալականացնելու նպատակով ստեղծված կենտրոն է, որտեղ նրանք մեծահասակ ու փորձված ցեղակիցներից իմանում են իրենց սովորություններն ու կրոնական պատկերացումները, արհեստներն ու վարքի ձևերը: Սա նաև կրոնական հաստատություն է, տաճար: Մեկնաբանելով էթնոմանկավարժական տեսանկյունից՝ տղամարդկանց տունը կարելի է դիտել որպես դպրոցի նախնական տեսակ: Եվ ուրեմն, իմ կարծիքով, բորորո ցեղի մշակույթը կարելի է դիտել որպես միջին տիպի՝ անցումային՝ սովորող և ուսուցանող տիպերի միջև ընկած մի ձև, որը, սակայն, բավականին կայուն է և գոյատևել է հարյուրամյակներ շարունակ, նույնիսկ հազարամյակներ:

ՄՈԳՈՒԹՅՈՒՆ, ՏՈՏԵՄԻՉՄ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. ՏՈՏԵՄ, ԹԱԲՈՒ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Էթնոմանկավարժական մշակույթը նույնքան Հին է, որքան էթնոսն ու նրա մշակույթն ընդհանրապես: Հիմքեր կան ենթադրելու, որ յուրաքանչյուր էթնոսի միջավայրում մանկավարժական հայացքներն ու դաստիարակության կանոնները ծագել են այնպիսի հիմնարար էթնոհոգեբանական երևույթների ազդեցության տակ, ինչպիսիք են տոտեմիզմը, թաբուները (արգելքները), ամուսնության տեսակները՝ էնդոգամիան և էկզոգամիան, լեզուն և էթնիկական մի շարք այլ հատկանիշներ, որոնց ամբողջությամբ բնութագրվում է յուրաքանչյուր էթնիկական հանրույթ: Էթնոմանկավարժական հետազոտությունների հետագա խորացումը պայմանավորված է լինելու, մասնավորապես, հենց հիշատակված երևույթների հոգեբանական ուսումնասիրություններով, էթնոգենեզում դրանց դերի բացահայտմամբ:

Հատկապես տոտեմիզմը, իմ կարծիքով, էական և բազմակողմանի ազդեցություն է գործել էթնոկիրների հոգեկան հատկությունների և վարքի վրա: Տոտեմն այն կենդանին է, որը սրբազան է համարվում, և որին որևէ կերպ օգտագործել որպես սնունդ կամ աշխատանքային ուժ, արգելված է: Այդպիսի արգելքը Պոլինեզիայի էթնոսներից մեկի լեզվով կոչվում է թաբու և այդ կերպ էլ մտել է գիտության մեջ: Թաբուն չպատճառաբանվող, ինքնըստինքյան հասկանալի համարվող արգելք է, նորմ, որը ավանդական է և հիմնավորման կարիք չունի: Օրինակ՝ ժամանակակից հասարակության մեջ այդ կերպ արգելված են արյունազդեցական կապերը, մարդակերությունը, գերեզմաններ պղծելը, մեռած մարդու միս ուտելը, մարդկանց հայրենասիրական զգացմունքները վիրավորելը: Նման արգելքները զանց առնելը խս-

տագույնս պատժվում է, և քչերն են համարձակվում խախտել դրանք:

Եթե տվյալ էթնիկական միջավայրում տոտեմ-կենդանին համարվում է էթնոսի նախնին, ապա մարդիկ հոգեբանորեն նույնանում են նրա հետ, ընդօրինակում են նրա վարքը և այդ կերպ իրենց մեջ այնպիսի հատկություններ և բնավորության գծեր են ձևավորում, որոնք նախապես վերագրվում են այդ կենդանուն: Հաճախ մարդիկ այդ կենդանու անունն են ընդունում, որը հենց նույնացման (իդենտիֆիկացիայի) համոզիչ դրսևորումներից մեկն է: Այդ նշանակում է, որ էթնոսի անդամների անձի վրա տոտեմի ազդեցությունն իրագործվում է հոգեբանական այնպիսի մեխանիզմների օգնությամբ, ինչպիսիք են հոգեբանական նույնացումը, վերագրումը (ատրիբուցիան) և, իհարկե, հիմնական իմացական գործընթացները (մտածողություն, հիշողություն, երևակայություն):

Շատ հետաքրքիր է պարզել, թե մոզերը, շամաններն ու ցեղերի առաջնորդները ինչպես են օգտագործել տոտեմների, կյանների և ցեղերի տոտեմները՝ էթնիկական որոշակի անձնային տիպեր ձևավորելու նպատակով: Պետք է ենթադրել, որ տոտեմների օգնությամբ դաստիարակչական ազդեցություն գործելու մեխանիզմներն օգտագործել են, մասնավորապես, պատանիների ձեռնադրման (ինիցիացիա)՝ մեծահասակների հասարակության մեջ ընդունելու ծիսական արարողություններում: Այդ կարևոր էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական երևույթի մասին մենք խոսելու ենք մանրամասնորեն:

Տարբեր ժողովուրդների, մասնավորապես ամերիկյան հնդկացիական ցեղերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մեջ «տոտեմիստական դաստիարակությունը» կատարվում է տոտեմ-կենդանու դերը կատարելու և նրա անունը որպես անձնանուն ընդունելու ճանապարհով: Այդ կերպ հնդկացիները ձգտում էին ձեռք բերել առյուծի, արծվի, արջի և այլ կենդանիների հատկություններ: Այն էթնոսներում, որոնք անհատի և ողջ էթնիկական համայնքի կյանքում տոտեմի դերը նշանակալից էին համարում, յուրաքանչյուրի կողմից անձնական տոտեմի ընտրությունը խոր ազդեցություն էր գործում անձի հետագա զարգացման, ինչպես նաև վարքի ձևավորման վրա:

Նման երևույթների մնացորդներ կան նույնիսկ զարգացած ազգերի մեջ, և էթնոհոգեբանության ու էթնոմանկավարժության լսնդիրներից մեկը դրանց բացահայտումն է:

2. ՄՈԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ա. Գիտելիքների երկու համակարգ

Ի՞նչ են սովորեցրել էթնոսներն իրենց նոր սերունդներին մինչև մոնոթեիստական կրոնների ծագումը, այն ժամանակներում, երբ տիրապետող էին անիմիզմը, կոապաչտությունն ու մոգությունը: Այս խնդիրն արծարծելիս նպատակահարմար եմ գտնում որպես հիմք ընդունել ականավոր ազգագետ Բրոնիսլավ Մալինովսկու տեսակետը նախնական ցեղերի մարդկանց մտածողության և գիտելիքների մասին:

Քննարկելով սոցիոլոգ Էմիլ Դյուրկհայմի տեսակետը նախնադարյան մարդու մտածողության մասին՝ Բ. Մալինովսկին ցույց տվեց, որ այն կարծիքը, թե մարդկանց մտածողությունը լիովին իռացիոնալ, մինչտրամաբանական է եղել, չի համապատասխանում իրականությանը: Հենվելով Նոր Գվինեայում իր կատարած հետազոտությունների արդյունքների վրա՝ նա ցույց տվեց, որ այդ «պրիմիտիվ» մարդիկ՝ մեթոդաբանները, գիտելիքների (և սրանց համապատասխանող վարքի) երկու համակարգ ունենին:

1. Ռացիոնալ, ճշգրիտ փորձնական գիտելիքներ բնության առարկաների, գյուղատնտեսության, կլիմայի, տարվա եղանակների հերթափոխության և այլ երևույթների մասին: Նրանք ունենին նաև գործիքներ պատրաստելու, նյութական բարիքներ ձեռք բերելու հմտություններ և այդ ամենը ավանդում էին հաջորդ սերունդներին: Առանց այդպիսի ռացիոնալ գիտելիքների նրանք ապրել չէին կարող: Նկատի ունենալով, որ մարդիկ դեռևս վայրենության շրջանում կատարելագործել են տեխնիկան և աշխատանքի եղանակները, նրանք շատ խելացի և բնական երևույթները ճիշտ արտացոլող մտքեր են ունեցել: Նախնադարյան էթնոսները ոչ թե լիովին խորհրդապաշտ մարդկանց հանրություններ էին, այլ այնպիսիք, որոնք փորձի վրա հիմնված և սիստեմավորված գիտելիքների մի ամբողջ համակարգ ունենին: Դրանք կարելի է գիտական գիտելիքների սաղմեր անվանել:

2. Կրոնական պատկերացումների և ծեսերի համակարգ, իսկ վերջիններիս մեջ էլ՝ մոգական գործողություններ, որոնք նախատեսված էին բնության ուժերի վրա կախարդանքի միջոցով ազդելու համար, երբ այդ ուժերը շատ զորեղ էին և իրենց հակողությունից դուրս էին գտնվում: Մեթոդաբաններին Մալինովսկին բնութագրում է որպես այնպիսի մարդ-

կանց, ովքեր ուղղակի համակված են մոգությունը: Բայց նույնիսկ այդ վիճակում նրանք զգալի քանակությամբ փորձնական, ճշգրիտ և օգտակար գիտելիքներ ունենին: Նրանք փորձված ձևորոնքներ էին, վարպետ արհեստավորներ և առևտրականներ, թեև ապրուստի միջոցներ հիմնականում ապահովում էին պարզունակ հողագործական աշխատանքով: Թեև նրանց գործիքները պարզունակ էին, բայց նրանք ընդարձակ գիտելիքներ ունենին հողի տեսակների, մշակվող բույսերի, ինչպես նաև ծանր ու մանրակրկիտ աշխատանքի անհրաժեշտության մասին: Նրանք այժմ էլ ճիշտ են որոշում ցանքի ժամանակը, սերմերի և հողի համապատասխանության հարցը, հաշվի են առնում տարվա ժամանակների հերթափոխությունը և եղանակի տատանումները և այլն:

Սակայն այս իմաստալից գործունեությունը հաճախակի հերթափոխվում է մոգական ծեսերով, որոնք ամեն տարի և հստակ հերթականությամբ կատարում են հենց բանջարանոցներում: Հետաքրքրական է, որ և՛ այդ բոլոր աշխատանքները, և՛ մոգական ծեսերը, կատարվում են նույն մարդու՝ հեքիմի (այսինքն՝ քրմի) կողմից: Մոգական գործողություններն անհրաժեշտ են համարվում հողի բերքատվության ապահովման և երաշտն ու մյուս վնասակար երևույթները կանխելու համար: Իսկ եթե դուք այդ «վայրի» մարդկանց առաջարկեք սահմանափակվել միայն կախարդությամբ և գործնական աշխատանք չկատարել (չցանել, չպաշտպանել ցանքը և այլն), ապա նրանք միայն կզարմանան ձեր միամտության վրա: Գործնական ու ռացիոնալ վարքի և մոգական գործողությունների սահմանները նրանք լավ են զգում¹⁴:

Բ. ՎԱՐԿԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՅՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ զարգացման այդ մակարդակի վրա գտնվող ցեղերի մարդիկ գիտելիքների, հմտությունների և պատկերացումների հիշյալ երկու համակարգերը ստեղծել են կյանքի տարբեր իրադրություններում օգտագործելու համար: Դրանց կարելի է նայել ժամանակակից հոգեբանության դիրքերից՝ ելնելով վերագրման (ատրիբուցիայի) տեսությունից և վերահսկողության տեղորոշման ձևերի մասին

¹⁴ Տե՛ս Малиновский Б., Мания, наука, религия, М., 1998, с. 27–30.
Տե՛ս նաև Ֆրեդեր Ջ.Ջ., Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան», 1989, էջ 19–62:

պատկերացումներից, որոնք ստեղծվել են սոցիալական հոգեբանության բնագավառում:

Խնդիրն այն է, որ նախնադարյան մարդկանց գիտելիքները սահմանափակ էին, և նրանք հասկանում էին, որ բնության մեջ կան ուժեր ու գործոններ, որոնք իրենց հսկողությունից դուրս են գտնվում: Այդ ուժերը մեկ նպաստում են իրենց արտադրական գործունեությունը՝ լավ բերք չնորհելով, մեկ էլ ոչնչացնում են ամեն ինչ, և մարդիկ դրա դեմ ոչինչ անել չեն կարող: Ուրեմն որոշ դեպքերում պարզվում է, որ մարդկանց գիտելիքներն ու վերջին բավարար չեն, և նրանք անգոր են արտաքին ուժերի դեմ: Հենց անգորության և անպաշտպանվածության այդ զգացումից ազատվելու համար էլ նրանք ստեղծել են մոգությունը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ այդ մարդիկ ունեցել են վերահսկողության երկու տեսակի տեղորոշում (վերահսկողության լոկուս) և հենց այդ հատկության ազդեցության տակ էլ դարերի ընթացքում ձևավորել են պատկերացումների և հմտությունների երկու համակարգ:

1) Ուսցիոնալ գիտելիքների և օգտակար հմտությունների համակարգ այն ամենի մասին, ինչը գտնվում է նրանց հսկողության տակ, ինչի վրա կարող են տիրապետել: Սա ներքին վերահսկողության արտահայտություն է, և մենք կարող ենք ասել, որ դիտական գիտելիքների սաղմերը առանձին ցեղեր և մարդկությունն ընդհանրապես ստեղծել են այն երևույթների մասին և լոկ այնքանով, որքանով ունեցել են ներքին վերահսկողություն, այսինքն՝ վստահ են եղել իրենց ուժերին, համոզվել են, որ կարող են ազդել իրադարձությունների ընթացքի վրա, նպատակներ դնել և հասնել դրանց:

2) Նախնական կրոնական և մոգական գիտելիքներ, պատկերացումներ և գործողություններ ստեղծվել են բնության այն ուժերը սանձելու համար, որոնց վրա մարդիկ հսկողություն չեն ունեցել: Այս դեպքում մենք տեսնում ենք վերահսկողության արտաքին լոկուսի գերակայություն, այսինքն՝ այնպիսի մտայնություն, որ մարդը չի կարող ոչինչ անել, թույլ է բնության խորհրդավոր և հզոր ուժերի հանդեպ, իրադարձությունները կատարվում են իր կամքից անկախ, որ բարեքների աղբյուրն էլ գտնվում է իրենցից դուրս, և նրանց պետք է հաճոյանալ՝ բարեգութ դարձնելու համար: Այսպես ստեղծվում են ուղիների մասին պատկերացումները, մոգական ծեսերը՝ նրանց վրա ազդելու համար: Ընդ որում, այս դեպքում գործում է ոչ միայն վերահսկողության տեղորոշման արտաքին ձևը, այլև հոգեբանական մի շատ հզոր մեխանիզմ՝ վերագրու-

մը (ատրիբուցիան): Ելնելով ուղիների դրսևորումներից (երկրաչարժ, ջրհեղեղ, երաշտ կամ, ընդհակառակը, առատ անձրևներ, ծնունդ և մահ, հիվանդություններ և այլն)՝ մարդիկ այդ երևակայական էակներին ամենագորություն և այլ հատկություններ են վերագրել՝ այնուհետև հավատալով իրենց իսկ կատարած վերագրումներին: Նրանք սկսել են այդ երևակայական էակների հանդեպ գործել այնպես, կարծես նրանք իրականում կան և ունեն հենց այն հատկությունները, որ իրենք են նրանց վերագրել: Դրանք հենց մոգական գործողություններ էին կամ դրանց համակարգեր՝ անհատական, իսկ ավելի հաճախ՝ խմբային ծեսեր: Դրանք մինչև այժմ էլ որոշ չափով պահպանվել են նույնիսկ համաշխարհային մոնոթեիկ կրոններ զավանդող ժողովուրդների մեջ: Օրինակ՝ նոր շենք կամ ջրանցք և կամ կամուրջ են հանձնում շահագործման, և քահանան աղոթք է կարդում, որպեսզի Աստված այն ամուր և հուսալի պահի: Մարդիկ գիտեն, որ գլխավորը ինժեներների և բանվորների ճիշտ հաշվարկներն են և հմուտ աշխատանքը, նյութի որակը և այլն, բայց անհրաժեշտ են համարում նաև չնեղացնել ուղիներին, ավելին՝ ստանալ նրանց օժանդակությունը:

Այդպես սերնդեսերունդ են անցնում, գործնական ճանապարհով, որպես ինքնաբեր սոցիալականացում և մասամբ միայն՝ որպես կազմակերպված մանկավարժական գործընթաց, պատկերացումների երկու համակարգ՝ ուսցիոնալ, փորձնական և երևույթների հատկությունները ճիշտ արտացոլող և դրա կողքին՝ մոգական, խորհրդապաշտական և կրոնական պատկերացումներ ու ծիսական հմտություններ: Մարդիկ նույնիսկ այսօր էլ ունեն դրանց պահանջը: Դժվար է նկատել, որ, օրինակ, վարորդներից շատերն իրենց մեքենաներում, հենց աչքի առաջ, թալիսմաններ են կախում, որոնք իբր թե պաշտպանում են չարից ու փորձանքից: Սա կարող է մանրուք թվալ, բայց մարդկանց կյանքը հագեցված է նման «մանրուքներով»:

Երբ ցեղերը մոգական ծեսեր են կատարում, ապա խելամիտ տնտեսական գործունեությունը (օրինակ՝ գյուղատնտեսական աշխատանքները) դադարեցվում է: Դրանց կատարման վրա արդելք՝ մոգական թարու է դրվում: Մարդիկ, այդ թվում նաև առաջնորդը, մեկ դերից անցնում է մյուսի կատարմանը, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր տեղը (իրադրությունը) և ժամանակը: Այդ դերերը հստակորեն տարբերակվում են և սահմանազատվում իրարից: Աշխատանքը և մոգությունը հերթափոխվում են, և ոչ մի «վայրենի» դրանք չի շփոթում իրար հետ:

Լեզվի զարգացումը սերտորեն կապված է գործունեության այս երկու

բնագավառների հետ: Այսպես կոչված «Հետամնաց ժողովուրդները» լեզվական հարուստ միջոցներ են մշակել ինչպես իրենց ռացիոնալ վարքի, այնպես էլ մոգական ու կրոնական պատկերացումների արտահայտման համար: Մարդը և՛ սթափ փորձագետ է, և՛ անտրիպալաչա՝ միաժամանակ:

Այնտեղ, որտեղ զժվարություններ և անորոշություն են ծագում, գործի է դրվում մոգությունը: Բ. Մալինովսկին նկարագրում է, օրինակ, Թորբրիանական կղզիների բնակիչների կողմից ձկնորսությունը զբաղվելու երկու իրադրություն. մեկը՝ ծովալճակներում, որտեղ ձկներին թունափորում են և առանց զժվարության հավաքում, իսկ մյուսը՝ ծովափին, որտեղ որսի ավելի զժվարին ու վտանգավոր եղանակներ են պետք, և որտեղ «բախտից» շատ բան է կախված, այդ թվում նաև այն, թե ձկների վտանգեր կհայտնվե՞ն արդյոք: Եվ ահա պարզվում է, որ ծովալճակների ծանծաղուտներում որս անելիս մարդիկ լիովին հենվում են իրենց գիտելիքների և հմտությունների վրա (այսինքն՝ այստեղ մոգություն չկա), մինչդեռ բաց ծովում անկանխատեսելի և վտանգավոր իրադրություններում օգտագործելու նպատակով ստեղծվել են մանրամասնորեն մշակված մոգական ծեսեր: Դրանք կոչված են պաշտպանելու մարդկանց կյանքը և հարուստ որս ապահովելու նրանց համար:

3. «ՆԵՐՔԻՆ» ԵՎ «ԱՐՏԱՔԻՆ» ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈԳՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսանք, երևույթների կրոնական, խորհրդապաշտական բացատրությունն ու նրանց վրա մոգական ազդեցություն գործելու ձևերի օգտագործումը (կախարդությունն ու մոգարգելքների՝ թաքուների սահմանումը), մարդիկ դիմում էին այն ժամանակ, երբ հայտնվում էին զժվարին, անորոշ ու անբացատրելի իրավիճակներում: Սակայն, ինչպես նկատեց Բ. Մալինովսկին, մոգությունը կամ ռացիոնալ գիտելիքներին դիմելը կախված է նաև այն անձի հեռանկարից, ով բացատրություններ է որոնում: Օրինակ՝ դիտարկենք մահվան երևույթի բացատրությունը: Մեյանեզիայի էթնոսների անդամները, որոնց ուսումնասիրել է Մալինովսկին, մահը բացատրում էին օրգանիզմի հոգանձությունը, սնունդ ընդունելու անընդունակությունը՝ այն զեպքում, երբ խոսում էին ուրիշի մահվան մասին: Դա ես անվանում եմ ներքին ատրիբուցիա. մեռնե-

լու ընթացքը բացատրելու համար դիմում էին մեռնող մարդու ներքին փոփոխությունների մասին կռահումներին՝ ներքին պատճառական վերադրման: Իսկ ինչպե՞ս էին բացատրում իրենց վիճակը հենց իրենք՝ մեռնողները: Նրանք ասում էին, որ իրենց կախարդել են, այսինքն՝ դիմում էին արտաքին պատճառական ատրիբուցիայի օգնությունը: Բ. Մալինովսկու ժամանակ վերադրման տեսությունը դեռ չէր ստեղծվել, և նա իր դիտարկումներին նման բացատրություն տալ չէր կարող¹⁵, բայց նրա բերած փաստերը ցույց են տալիս, որ այդպիսի բացատրությունը շատ տեղին է և թույլ է տալիս բացահայտել կատարվող հոգեբանական գործընթացների մեխանիզմները:

Ի՞նչ է տալիս այդպիսի մոտեցումը էթնոմանկավարժությանն ու էթնոհոգեբանությանը: Բանն այն է, որ երևույթների բացատրության այդ երկու ձևերը կամ ռազմավարությունները (ստրատեգիաները) դառնում են ավանդական և փոխանցվում են սերնդեսերունդ: Դա նշանակում է, որ մոգական և ռացիոնալ ստրատեգիաները դառնում են նոր սերունդների սոցիալականացման միջոցներ: Իսկ քանի որ և՛ աշխատանքային գործընթացները, և՛ մոգական արարողությունները կազմակերպված բնույթ ունենին և իրենց համար նշանակված տեղերն ու ժամանակահատվածները, ապա մենք գործ ունենք մանկավարժական գործընթացների հետ:

Ավելին, սիստեմատիկորեն կրկնելու զեպքում սոցիալականացման հիշյալ ռազմավարությունները հանգեցնում են էթնիկական բնավորության գծերի և բարդույթների ձևավորման: Օրինակ՝ եթե երևենք այն փաստերից, որ Մեյանեզիայի բնիկների վերաբերյալ իրենց աշխատություններում ներկայացնում են Բ. Մալինովսկին և այլ մարդաբաններ ու ազգաբաններ, այդ մարդկանց բնավորության մեջ շեշտված է եղել ճակատագրապաշտությունը (Ֆատալիզմը):

Այստեղ շարադրված տեսակետի դիրքերից այժմ արդեն կարող ենք ուսումնասիրել հայերի նախաքրիստոնեական կրոնական պատկերացումներն ու մոգական պրակտիկան, ինչպես նաև ռացիոնալ գիտելիքները, և տեսնել, թե նրանց մոտ երևույթների բացատրության հիշյալ երկու ռազմավարություններից որն է դերակշռողը եղել, և դա ինչ հետք է թողել այս ազգի հոգեկերտվածքում: Այս կարևոր խնդիրն անպայման լրջմիտ հետազոտություն է պահանջում:

¹⁵ Տե՛ս Малиновский Б., Магия, наука, религия, М., 1998, с. 35.

4. ՄՈԳՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ա. ՄՈԳՈՒԹՅԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Ինչպես ցույց են տվել Ջ. Ֆրեզերի, Բ. Մալինովսկու և այլ ազգագետների ուսումնասիրությունները, մոգությունն իդոլը չի ծագել, այն ունեցել է և այժմ էլ որոշ ժողովուրդների կյանքում ունի բավականին կարևոր ֆունկցիաներ:

Մոգական գործողությունները, ինչպես տեսանք, կատարվում են անորոշ, վտանգ և անսպասելի պատահարներ խոստացող իրադրություններում և խնդիր ունեն «լցնելու» այդ անորոշությունը, ավելի որոշակի դարձնելու իրադրությունը: Եթե խոսենք այսօրվա հոգեբանության լեզվով, ապա մոգական գործողությունները կարելի է դիտել որպես ֆրոստրացիաներից և սթրեսներից ազատվելու միջոց: Դրանք մարդուն անորոշ խնդիրների որոշակի «յուծումներ» են տալիս, մարդուն ներշնչում են, որ ինքն ուժեղ է և կարող է ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Սա էլ արդեն նրա Հաջորդ ֆունկցիան է. մոգական գործողությունները մարդուն վստահություն են ներշնչում, որ կարող է հասնել իր առջև դրված նպատակներին, որ հաջողությունը հնարավոր է:

Բայց մոգությունն ունի ևս մեկ ֆունկցիա, որը չի նկատվել նախորդ հետազոտողների կողմից. դա մոգության հոգեպաշտպանական ֆունկցիան է: Մոգական գործողությունները մարդուն վստահություն են ներշնչում, հոգեկան անդորրություն են պարգևում, ավելի կազմակերպված են դարձնում նրա գործողություններն ու կանխում են պաթոլոգիայի զարգացումը:

Մոգությունը ծառայել է նաև ուրիշների բարի բախտը խլելու և ավելի բախտավոր դառնալու մտադրությամբ: Պատմությունից հայտնի է այսպիսի փաստ. պարսիկները փորձել են փախցնել Արշակունի թագավորների ոսկորները, բայց Մամիկոնյան իշխաններին հաջողվել է փակել նրանց ճանապարհը, հաղթել և վերադարձնել այդ մասունքները: Դրանք այժմ թաղված են ներկա Հայաստանի սահմաններում:

Ինչո՞ւ էին պարսիկները տանում հանգուցյալ հայ արքաների ոսկորները: Որպեսզի հայ ժողովրդից խլեին նրա բախտն ու հաջողությունները: Կռապաշտ և արևապաշտ պարսիկները անիմիստներ էին: Նրանք նաև մոգեր էին, քանի որ ոսկորների միջոցով մի ամբողջ ազգի ճակատագրի վրա ազդելու փորձը մոգական գործողություն էր: Հնում ցեղերն

ու ազգերն այդպես իրարից խլում էին կուռքերին՝ հուսալով, թե դրանցից զրկվածները կկորցնեն այդ աստվածություն հովանավորությունը: Իսկ երբ կուռքերից մեկն իրեն չէր արդարացնում, մարդիկ այլ տեսակի մոգական գործողություններ էին կատարում. տապալում էին կուռքին:

բ. ՄՈԳՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ինչպիսի՞նք հոգեբանական մեխանիզմների օգնությամբ էր իրագործվում մոգությունը: Թեև նախորդ էջերում դրանք այս կամ այն չափով ակնարկվել են, այստեղ առանձին դիտարկենք դրանցից մի քանիսը:

Ներշնչում. այս մեխանիզմի գործողությունը կասկած չի հարուցում, հատկապես այն դեպքում, երբ մոգությունը կատարում են հեղինակավոր անձինք՝ մոգերը, այդ գործի մասնագետները, որոնք ժամանակի ընթացքում հասարակության մեջ որոշակի և բավականին ազդեցիկ դաս կազմեցին:

Ինքնաներշնչում. այս մեխանիզմը հատկապես կարևոր է դառնում այն դեպքում, երբ մարդն իր գործողությունների հաջողությունն ապահովելու համար, ուսկի դիմելուց առաջ, ինքն է մոգական գործողություններ կատարում:

Ատրիբուցիայի (վերագրման) տարբեր տեսակներն այստեղ, անկասկած, մեծ դեր են կատարում. ա) մոգն ինքն իրեն հատուկ ընդունակություններ է վերագրում: Նույնիսկ ժամանակակից թամագան, բարի մադթանքներ ասելով, սկսում է հավատալ, թե իբր իր խոսքն ինչ-որ ուժ ունի, թե իբր ինքը կարող է ազդել ուրիշների ճակատագրի վրա: Սա ինքնավերագրման (ինքնատրիբուցիայի, ավտոատրիբուցիայի) երևույթն է, որը, ինչպես դժվար չէ համոզվել, ծագել է շատ վաղուց: Բավական է հիշել նաև, թե իրենց ինչպիսի աստվածային հատկություններ են վերագրել Բարեկոնի և Ասորեստանի թագավորները, հատկապես հաղթանակներ տանելուց հետո: Այդ ինքնավերագրումները պահպանվել են նրանց թողած արձանագրություններում: Դրանք թագավոր-մոգեր էին:

Եթե մոգությունը կատարվում է ոգիների օգնությամբ, ապա հատուկ ընդունակություններ են վերագրվում հենց այդ ոգիներին: Սև և սպիտակ մոգության դեպքում այդ վերագրումներն ունեին տարբերություններ: Մի բան է սատանան, և այլ բան՝ բարի հրեշտակը:

Մոգության ֆունկցիաներն ու մեխանիզմները նկատի ունենալով պետք է եզրակացնել, որ երեխաներին մոգության միջոցով սոցիալա-

կանացնելիս մենք նոր սերնդի ուղեղների մեջ միանգամից շատ ծավալուն հոգեբանական բովանդակություն ենք մտցնում: Եթե նման սոցիալականացումը մեծ տեղ է զբաղում անձի զարգացման գործում, ապա կարող է մեծապես խանգարել նրանում զիտական մտածելակերպի ձևավորմանը: «Մոգական սոցիալականացման» խնդրին կանդրադառնանք քիչ հետո:

5. ՄՈԳՈՒԹՅԱՆ ՀՈԳԵ—ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դեռևս XIX դարի վերջերին անգլիացի ազգագետ Ջեյմս Ջորջ Ֆրեզերը ցույց տվեց, որ մոգությունը հենվում է տրամաբանական երկու գործողությունների վրա. ա) առարկաների նմանություն և այն համոզման վրա, թե իբր «նմանը ծնում է նմանին»: Այնուհետև նա պարզաբանում էր, որ խոսքը, ըստ էության, ըստ նմանության զուգորդության մասին է, բ) առարկաների կապի կամ շփման, վարակի մեխանիզմը (սկզբունքը): Տրամաբանությունը հետևյալն է. եթե Ա առարկան որևէ կերպ կապի մեջ է եղել Բ անձի հետ, ապա նրանց միջև կապը պահպանվում է, եթե նրանք նույնիսկ հեռու են իրարից: Հետևաբար, ազդելով Ա առարկայի վրա՝ կարելի է ազդել նաև Բ անձի վրա: Այնուհետև պարզվում է, որ խոսքը, ըստ էության, ըստ սահմանակցության զուգորդության մասին է¹⁶:

Եթե այս արդյունքները ներկայացնելու լինենք ժամանակակից հոգեբանության լեզվով, ապա կարող ենք ասել, որ մոգության հոգե—տրամաբանությունը հանգեցվում է զուգորդական պարզ կապերին՝ ըստ նմանության և ըստ սահմանակցության զուգորդություններին, որոնք, ըստ էության, ոչ թե մտածողության, այլ հիշողության աշխատանքի մեխանիզմներ են: Գուցե նույնիսկ կարելի է ասել, որ համոզված մոգը և նրա կախարդությանը հավատացողները ունեցել են հիշողություն, կոնկրետ—առարկայական և կոնկրետ—պատկերավոր բավականին զարգացած մտածողություն, բայց գրեթե չեն ունեցել

զարգացած վերացական մտածողություն և ընդհանրացնելու կարողություն: Համենայն դեպս, դրանք զտնվել են սաղմնային վիճակում: Ես կարծում եմ, որ մոգության մեջ մտածողությանը մեծ չափով փոխարինում է զուգորդական հիշողությունը:

Քանի որ մոգության մնացորդները ժողովրդի մեջ շատ ուժեղ են, ապա ժողովրդական զիջակտիկան, իմ կարծիքով, ավելի հաճախ հենվում է մոգության հոգեբանական տրամաբանության, այլ ոչ թե զիտական մտածողության և ձևական տրամաբանության վրա:

Մոգական հոգետրամաբանության մյուս առանձնահատկությունը հենց այն է, որ մոգը հիշողության ոլորտին վերաբերող զուգորդական կապերը ենթադիտակցորեն մտածական կապի տեղ է դնում: Օրինակ՝ նա ըստ նմանության զուգորդությունից բխեցնում է, թե իբր նման առարկաները նույնական են: Սա հենց հոգե—տրամաբանական դատողություն է և թաքուն կերպով իր մեջ ունի հոգեբանական հետևյալ գործողությունները.

1. Ա—ն և Բ—ն նման են:

2. Հետևաբար Ա—Ն և Բ—ն նույնն են:

Օրինակ՝ որևէ ցեղի պատկանող որսորդները, մինչև որսի գուրս դալը, հաջող որսի տեսարան են սարքում (Ա)՝ ենթադրելով, թե իսկական որսը (Բ) նույնպիսին ու հաջող կլինի: Ենթադրվում է, որ ինչ—որ կերպ Ա—ն ազդելու է Բ—ի վրա (կամ նույնիսկ առաջ է բերելու այն), քանի որ դրանք ըստ արտաքին նշանների նման են:

Այն դեպքում, երբ մոգության երկու տեսակները (ըստ նմանության կամ հոմոնոպատիկ և ըստ շփման կամ ըստ սահմանակցության) հանդես են գալիս որպես մեկ միասնական գործընթաց, ապա այդպիսի կոմպլեքսային մոգության հոգե—տրամաբանությունն է՛լ ավելի բարդ է լինում: Մոգության այս երկու տեսակներին Ջ.Ջ. Ֆրեզերը մեկ միասնական անուն է տվել. համակրական (սիմպատիկ) մոգություն»... քանի որ երկու դեպքում էլ ենթադրվում է, որ գաղտնի համակրանքի շնորհիվ առարկաները հեռավորությունից ազդում են միմյանց վրա, և ազդակը մեկից մյուսին է հաղորդվում աներևույթ եթերին նմանվող ինչ—որ բանի միջոցով»¹⁷ Ժամանակակից մարդկանց հոգեկան գործունեության մեջ ևս նման երևույթները զգալի տեղ են զբաղում: Գիտական մտածողությունը քչերին է հատուկ:

¹⁶ Տես Ֆրեզեր Ջ.Ջ., Ոսկե ճյուղը, գլ. 3:

¹⁷ Աշվ. աշխ., էջ 21:

Հետաքրքրական է, որ, իմ կարծիքով, մոզական պատկերացումները որոշ չափով պահպանվել են նաև սոցիալական հոգեբանություն մեջ: Դրանք իրենց արձագանքն են թողել հոգեկան վարակի մասին XIX դարի և XX դարի սկզբների սոցիալական հոգեբանների (Գ. Լըբոն, Սիգել, Մակդաուգոլ և ուրիշներ) հայացքներում, ինչպես նաև Զեկոբ Մորենոյի սոցիոմետրական տեսության մեջ:

«Նմանը ծնում է նմանին» հոգե-տրամաբանական սկզբունքին համապատասխան՝ կատարվում են այսպիսի մոզական գործողություններ («կախարդություններ»): ա) ոչնչացնում են թշնամու պատկերը՝ այդ կերպ փորձելով ոչնչացնել թշնամուն: Մինչև այժմ էլ դա կիրառվում է: Օրինակ՝ այրում են որևէ քաղաքական գործչի պատկերը կամ խրտվիլակը՝ այդպես հեռվից «հարված հասցնելով» նրան: Օրինակ՝ սրանից 2-3 տարի առաջ Հայաստանում, Հարավսլավիայի ամերիկյան ուժակոծությունների կապակցությամբ, հայ կոմունիստները ցույց կազմակերպեցին և ԱՄՆ-ի դեսպանություն առջև փորձեցին այրել նախագահ Քլինթոնի խրտվիլակը: Բայց քանի որ ոստիկանությունը կանխեց այդ մոզական ու սիմվոլիկ գործողությունը, Քլինթոնը կարողացավ շարունակել իր ավերիչ գործունեությունը:

Նշենք նաև, որ մոզական գործողությունները երկու խմբի են բաժանվում: ա) դրական պատվիրաններ կամ ներշնչումներ: Սրանք կազմում են կախարդությունը, բ) արգելքներ (թաբուներ), այսինքն՝ բացասական կանոններ, որոնք կազմում են թաբուն՝ մոզարգելքը:

6. ՍՈՊՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ա. «ՍՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ» ԱՅՍՕՐ

Այսօր էլ մենք աննկատելիորեն իրագործում ենք այն, ինչ կարելի է մոզական սոցիալականացում անվանել: Այդ նշանակում է, որ մենք մեր խոսքով ու վարքով օրինակ ենք ծառայում և նոր սերնդին մոզություն ենք սովորեցնում, և նրանց ներկայացնում են այդ երևույթի այն տարրերը, որոնք մնացել են մեր միջավայրում: Բերենք մոզական սոցիալականացման օրինակներ և կոտեսենք, որ այն

բավականին բազմազան ձևեր ու մեխանիզմներ ունի:

Ամենից առաջ նշենք, որ անեծքները մոզական իմաստ ու նպատակներ ունեն. անիծելով որևէ մեկին՝ մենք փորձում ենք զուտ հոգեբանական եղանակով նրան վնաս պատճառել, հիվանդություն հարուցել նրանում, նրա ճանապարհին խոչընդոտներ ստեղծել և փորձանքի բերել: Սա սև մոզություն է և մեր օրերում էլ շատ տարածված:

Ինչպես մեր նախնիները, ժամանակակիցները նույնպես սև մոզություն իրագործում են ոչ միայն ուղղակիորեն, այսինքն՝ հույսը դնելով միայն սեփական ընդունակությունների վրա, այլև՝ միջնորդված՝ ոգիների միջնորդությամբ և օգնությամբ: Առաջին դեպքի հետ գործ ունենք, երբ որևէ մեկը մեկ այլ մարդու հասցեին ասում է. «Ա՛յ, սատկես դու, էլ երեսդ չտեսնեմ» և այլ նման բաներ: Երկրորդ դեպքի օրինակներ են հետևյալները. «Սատանա՛ն քեզ տանի» կամ «Գրո՛ղը տանի», «Գնա՛ գրողի ծոցը» և այլն: Ինչպես տեսնում ենք, մոզական արդյունք ստանալու նպատակով այժմ էլ մարդիկ դիմում են չար կամ բարի ոգիների օգնությանը՝ հավանորեն զգալով, որ միայնակ չեն կարող հասնել իրենց նպատակներին:

Սպիտակ մոզությունը, այսինքն՝ ուրիշներին բարիք, հաջողություն և երջանկություն պարգևելը, կատարվում է, ինչպես արդեն հիշատակել եմ նախորդ էջերում, զանազան մաղթանքների օգնությամբ, որոնք այնքան առատորեն դրսևորվում են, օրինակ, ճաշկերույթների, ծննդյան տոների, հարսանիքների և նույնիսկ մեռելահացի ժամանակ: Մոզություն այս տեսակն այնքան առօրյա և բնական է դարձել, որ երբ որևէ մեկը մոռանում է կիրառել այն, շատերի մեջ զարմանք է հարուցում:

Օրինակ՝ դուք մասնակցում եք որևէ մեկի ծննդյան օրվան նվիրված երեկույթին, սակայն բաժակաճառ չեք ասում: Բայց «նորածինն» ու նրա հարազատները սպասում են ձեր մաղթանքներին՝ մասամբ հավատալով, թե իբր զբանք ինչ-որ նշանակություն ունեն իր ճակատագրի համար, մասամբ էլ ձեր վերաբերմունքն իմանալու ակնկալիքով:

Լինում են դեպքեր, երբ Ա. անձի վերաբերմունքը Բ-ի նկատմամբ բացասական է, և մտքում նա սև մոզություն է անում նրա նկատմամբ, բայց արտաքինապես, կոնֆորմիզմ դրսևորելով, սկսում է բարի մաղթանքներ դրսևորել այդ նույն անձի նկատմամբ: Սա կոնֆլիկտային, ամբիվալենտ վիճակ է, որի ազդեցություն տակ բացահայտորեն

զբսևորվող սպիտակ մոդուլթյունը կամ կորցնում է իր հուզական ուժն ու համոզականությունը, կամ էլ, ընդհակառակը, դառնում է չափազանցված, շատ շեշտված: Այսպիսի դեպքերում մարդու մեջ գործում է հակադարձ ռեակցիայի ձևավորման մեխանիզմը, որի աշխատանքը նա կարող է բոլորովին չգիտակցել:

Այս բոլոր դեպքերի վարքային զբսևորումները չէին կարող աննկատելի մնալ երեխաների, դեռահասաների ու պատանիների համար: Նրանք նկատում են դրանք, սովորում, սկսում են իրենք էլ, մեծահասակների նմանություններ, մաղթանքներ ասել, անիծել կամ նույնիսկ երկերեսանիություն, փարիսեցիություն անել. մտքում անիծել, իսկ բարձրաձայն զուգարանել և երջանկություն ցանկանալ: Այսպիսի մոգական սոցիալականացումը ժամանակակից մարդու անհատական կուլտուրայի այն ընդհանուր ֆոնն է, որի վրա կատարվում են նրա դերային, մասնագիտական սոցիալականացումն ու այդ գործընթացի մյուս տեսակները: Դա կատարվում է մեծ չափով ինքնաբերաբար, մեծահասակների հետ ամենօրյա շփումների ընթացքում: Մոգական սոցիալականացումն ինչ—որ չափով անկասելի սոցիալ—հոգեբանական գործընթաց է:

բ. ՍՈՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԵԱԿՅԻ ԾՆՈՒՆԴԸ

Նորածինների սոցիալականացումը կարող է սկսվել մոգական գործողություններով: Շատ հետաքրքիր կլինեն դիտել և պարզել, թե արդյո՞ք այդպիսի գործողություններ կատարում են զարգացած ազգերի ներկայացուցիչները, սակայն դրանք ակնհայտորեն կան էթնոգենեզի ավելի ցածր աստիճանի վրա կանգնած ժողովուրդների մեջ: Այդպիսի երևույթները ազգագետներն արդեն նկատել են: Կալիմանտան կղզու մոտակայքում կա ևս մեկը՝ Սարավակ անունով: Այստեղ ապրում է դայակներ կոչվող ցեղը, որն ունի երկու ճյուղ՝ ցամաքային և ծովային: Վերջինը կոչվում է իրա: Ահա այս իրաները, որոնց կյանքը մեծ մասամբ անցնում է ծովում, ունեն այսպիսի մի սովորություն. երբ երեխա է ծնվում, ծնվելուց հինգ օր անց հայրը մակույկ է վերցնում, կնոջն ու երեխային բաց ծով է դուրս բերում, այնպես, որ ափը չերևա: Մայրը երեխային մինչև գոտկատեղը ընկղմում է ջրի մեջ, իսկ հայրը դիմում է փոքրիկ որդուն՝ այսպիսի խոսքերով.

«—Տե՛ս, սա ծովն է: Ծովը քո տունն է: Մտերմացի՛ր հետը, սիրի՛ր և մի՛ գայրացրու նրան:

Ապա նա դիմում է ծովին.

— Սա իմ որդին է: Ես քեզ կասեմ նրա անունը, իսկ դու հիշի՛ր նրան: Ընդունի՛ր իմ նվերը, մի՛ մերժիր և մտերմացի՛ր իմ որդու հետ: Եվ մի մետաղադրամ է գցում ծովը»¹⁸:

Ե՛վ այդ խոսքերը, և՛ մետաղադրամը ծովը նետելը մոգական գործողություններ են: Այժմ փորձեք հիշել, թե արդյո՞ք հայերի մեջ այդպիսի սովորույթներ կան:

Երեխայի մոգական սոցիալականացման միջոցները բազմաթիվ են և հայտնաբերվել են տարբեր էթնիկական հանրույթների մշակույթներում: Օրինակ՝ մասաի ցեղի մարդկանց շրջանում ընդունված է, որ երեխան պետք է ծնվի առյուծի մորթու վրա: Երբ նա ծնվում է, կողքին արդեն դրված են լինում փոքրիկ նիզակն ու վահանը: Նա պետք է գինվոր դառնա: Այնուհետև մայրը, թեև դեռ թույլ է զգում իրեն, ոտքի է ելնում, երեխային կապում են նրա մեջքին, այդ վիճակում նա կթում է կովին, այդ կաթին խառնում են կովի արյունը և ապա այդ խառնուրդի մեջ լողացնում են մանկիկին, որպեսզի նա թշնամու համար անխոցելի դառնա: Դրանից հետո է միայն հայրն իր նորածնին իր ձեռքերի մեջ առնում: Նա՛ փոքրիկը, հիմա արդեն իսկական մասաի է, նա կմեծանա և առյուծ կսպանի¹⁹:

Գրբերը և նախշերը նույնպես կարող են մոգական նշանակություն ունենալ և օգտագործվել մանկիկներին սոցիալականացնելիս: Ըստ պապուաանների հավատալիքների՝ աշխարհը լի է ոգիներով, որոնք կարող են վնասել ծնվող երեխային: Ահա թե ինչու, երբ կինը խրճիթում ծննդաբերում է, նիզակով գինված ամուսինը դուստն մոտ պահակ է կանգնում: Ենթադրվում է, որ այս դեպքում ոգիները կվախենան և մոտ չեն գա: Ամբողջ գիշեր ապագա հայրը պահակ է կանգնում: Իսկ երբ երեխան արդեն ծնվել է, նա առավոտյան փոքրիկին դնում է մոգական նախշերով զարդարված օրորոցի մեջ, որովհետև այդ ցեղի մարդիկ հավատում են, որ մոգական նախշերը տեսնելիս չար ոգիները կհեռանան խրճիթից²⁰:

¹⁸ Գրիծո Ա., Միցց Լ., Մարդիկ և սովորույթներ, Երևան, «Լույս» հրատ., 1987, էջ 26—27:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 28:

²⁰ Նշվ. աշխ., էջ 29:

Օրորոցը փոխանցվում է սերնդեսերունդ: Նույն օրորոցում են մեծացել պապն ու Հայրը, Հիմա պետք է մեծանա նաև նորածին փոքրիկը: Բայց մոգությունը սրանով չի ավարտվում: Այդ օրորոցին ժամանակ առ ժամանակ դոհաբերվում են խոճկորի կծղակներ և ատամներ, իսկ միսն ուտում է ցեղի կախարհը: «Իրանից Հետո նա շոյում է նորածնի գլուխն ու վեհանձնորեն ասում.

— Մի՛ վախեցիր չար ոգիներից: Դու մեծ զինվորի որդի ես, Հզոր կախարհի բարեկամը, ոգիներն անզոր են քո դիմաց»²¹:

Երեխան, անշուշտ, չի կարող Հասկանալ այս ամենը, բայց ինքնին մոգություն միջոցով նրան Հասարակության լիարժեք և պաշտպանված անդամ դարձնելը շատ նշանակալից էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական երևույթ է՝ արժանի հետադա ավելի խոր ուսումնասիրության: Հնարավոր է նաև, որ երեխայի էթնիկական սոցիալականացումն ավելի հուսալի ու անջնջելի դարձնելու նպատակով այդ բանաձևերն ու ներշնչումները հետագայում կրկնվում են և ամրապնդվում նրա հիշողության մեջ:

գ. ՍԱՂԹԱՆՔՆԵՐ ԵՎ ՄՈԳԿԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ

Էթնիկական սոցիալականացման արդյունավետ միջոցներ են նաև այն մաղթանքները, որոնցով նորածիններին դիմել են նրանց ծնողները կամ տոհմի ու ցեղի երեւելի մարդիկ՝ առաջնորդները, ցեղապետերն ու շամանները (քրմերը): Գրեթե բոլոր էթնոսներում Հավատացել են, որ մաղթանքը նշանակություն ունի, որ այն իսկապես կարող է ազդել մարդու ճակատագրի վրա: Հետևաբար որևէ երեխայի մաղթանքներ ասելը բարի և օգտակար գործ է Համարվել, մինչդեռ բացասական մաղթանքները (անեծքները) Համարվել են վտանգավոր ու չարիք բերող:

Պետք է նշել մի շատ հետաքրքրական հոգեբանական երևույթ, որը կապված է մաղթանքի ծագման հետ և դեռևս պետք է ուսումնասիրվի: Երբ մարդու կյանքում որևէ ցնցող իրադարձություն է կատարվում՝ գավալի ծնունդ, Հարազատի կորուստ, մեծ Հարստության ժառանգում կամ, ընդհակառակը, կորուստ, կամ երբ բնական աղետներ են տեղի ունենում, ապա նրա մեջ ծագում (կամ արթնանում) է կրոնա-

կան զգացման նման մի բան, և նա աղոթելու, մաղթանքներ կամ անեծքներ ասելու ցանկություն է ունենում:

Եվ դա՛ ինքնաբերաբար, ինչ—որ ներքին մղումով, որի գոյությունն իր մեջ նա մինչ այդ դուցե նույնիսկ չի զգացել:

Սա է պատճառը, որ երբ ընտանիքում երեխա է ծնվում, ապա ծնողները կրոնական ապրումներ են ունենում կամ այդպիսի ապրումներ հիշեցնող զգացում, ինչպես նաև սրբազան խոսքեր ասելու ցանկություն: Այդպես են ծնվում մաղթանքները: Կորուստների և դառնությունների դեպքում կարող են անեծքներ ծնվել: Բանի որ դրանք՝ և՛ մաղթանքները, և՛ անեծքները, էթնոսի մշակույթի բաղադրիչներ են, ապա կարելի է ասել, որ ի դեմս դրանց ծագման մեք գործ ունենք էթնոհոգեբանական մասնավոր գործընթացների հետ:

Իսկ Հիմա, որպես օրինակ, տեսնենք, թե երեխայի ծնվելուց Հետո՝ կյանքի յոթերորդ օրը, ինչ են ասում նրան Արևելյան Աֆրիկայում ապրող սուահիլի ցեղի մարդիկ.

«— Դու աշխարհ եկար: Փակի՛ր ականջներդ ու մի՛ լսիր, թե ինչ են ասում չար մարդիկ: Դու աշխարհ եկար: Թող այն բարին, որ քեզ տրված է, մնա քեզ, իսկ չարը հեռու քշիր: Դու աշխարհ եկար: Վեճեր մի՛ փնտրիր, մարդկանց մի՛ թշնամացրու: Դեռևս մեր Հայրերն են ասել՝ ինչ Հարկավոր է պարզելու, պարզիր, մնացածը կուլ տուր: Սանձի՛ր քո սիրտը և մարդկանց մոտ ե՛կ միայն խաղաղությունը...»²²:

Սա, ինչպես տեսնում ենք, դաստիարակչական մի ամբողջ ծրագիր է, որը նորածինը, անկասկած, ըմբռնել չի կարող, բայց կասկած չկա, որ հետագայում այդ խոսքերը նրան կասեն կրկին ու կրկին, և նա կիմանա, որ կան չար ու բարի մարդիկ, որ պետք է հեռու մնալ չարից, որ մարդկանց հետ թշնամանալը վնասակար է և այլն:

Դժվար է հասկանալ, որ ժամանակակից մարդկանց մաղթանքները մոգության Հնից մնացած հետքեր են, բայց այնքան առատ, այնքան տարածված ու գործունակ, որ ժամանակակից էթնոսների մշակույթներում դեռևս զգալի տեղ են գրավում: «Ցանկանում եմ Ձեզ առողջություն, երջանկություն, նոր հաջողություններ...», — շատ անկեղծ ու համոզված, որ կարևոր բան է ասում, ելույթ է ունենում ճառախոսը: «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրե՛ք», — ասում էին Թումանյանի բանաստեղծության ծերունիները երեխաներին և ամենայն լրջու-

²¹ Նշվ. աշխ., էջ 29:

²² Նշվ. աշխ., էջ 29:

թյամբ: Մոգական ազդեցություն գործելու, ուրիշի ճակատագրի վրա ազդելու մոտիվացիան նման դեպքերում ակնհայտ է:

Երբ Շամիրամ թագուհին արայեզների օգնությամբ փորձում էր կենդանացնել Արային, ապա նա իր ազգին բնորոշ մոգություն էր անում: Հետաքրքիր կլինեի պարզել, թե արայեզների օգնությամբ մեռածին վերակենդանացնելու փորձերը հայկական էթնոսում մինչ այդ գոյություն ունեցե՞լ են, թե՞ ոչ:

Այսօր, եթե ընտանիքի անդամներից որևէ մեկը կարևոր գործով հեռավոր ճամփորդության է մեկնում կամ քննություն հանձնելու է գնում, նրա հետևից ջուր են շաղ տալիս: Սա սպիտակ մոգություն է: Բայց երբ որևէ մեկի հետևից սպիտակ գործվածքի կտոր են ծածանում, ապա սա արդեն սև մոգություն է. ցանկանում են, որպեսզի նա անհաջողության մատնվի կամ նույնիսկ մեռնի:

Մինչև այժմ հանդիպում են նաև սիրային մոգության դեպքեր: Եղել են և այժմ էլ կան (հատկապես նախնազարյան կյանքով ապրող ցեղերի մեջ) սեր առաջ բերելու և սերն ուժեղացնելու համար նախատեսված մոգական գործողություններ: Գոյություն են ունեցել սիրային մոգության հետ կապված առասպելներ: Այդ մասին բավականին հարուստ տեղեկություններ կան ազգագրական գրականության մեջ:

Մենք արդեն տեսանք, որ մոգական ներգործությունը կարող է լինել անմիջական և միջնորդված: Միջնորդված մոգական ներգործության տեսակներից մեկն այն է, երբ մոգը կամ ժամանակ առ ժամանակ մոգություն կատարող մարդը ուրիշի վրա ազդելու համար դիմում է ուզինների օգնությանը, օրինակ՝ դիմում է սատանային՝ խնդրելով, որ վերցնի ու տանի ատելի անձնավորությանը:

Կա միջնորդված մոգության ևս մեկ տեսակ, որը կատարվում է մարդկանց զոհաբերելու միջոցով: Օրինակ՝ շենք են կառուցում, բայց որպեսզի այն ամուր լինի և չփլվի, հիմքի տակ մարդ են դնում և պատը վրան են շարում կամ նրան վրակում են պատի մեջ: Այս վայրենի սովորույթը շատ տարածված է եղել մարդկության մեջ և պահպանվել է ընդհուպ մինչև նորագույն պատմության ժամանակաշրջանը²³:

Նման սովորույթները ևս սոցիալականացնող ազդեցություն են գործել մարդկանց վրա:

²³ Նման սովորույթների մասին բազմաթիվ փաստեր կարելի է գտնել հետևյալ աշխատություններում. Ֆրեդեր Զ.Զ., Ոսկե ճյուղը, Երևան, «Չայատամ», 1989: *Тойлер Э.Б.*, Первобытная культура, М., 1989; *Малиновский Б.*, Магия, наука, религия, М., 1998.

7. ԽՐԱՏ ԵՎ ՍՈՊՈՒԹՅՈՒՆ

Խրատն այն խորհուրդն է, որը հենվում է իրական գործնական գիտելիքի վրա. առարկաների և մարդկանց հատկություններն իմանալով՝ մարդը ուրիշին փորձում է մղել ճիշտ գործողությունների, հեռու պահել սխալներից և անտեղի կորուստներից: Օրինակ՝ երբ մենք երեխային ասում ենք. «Ձեռքդ հեռո՛ւ պահիր կրակից, կայրվես» կամ «Տաք հագիր, թե չէ կմրսես», ապա սրանք խրատներ են: Դրանց հիմքում ըստ էության ընկած են թեև տարրական, բայց օբյեկտիվ, գիտական գիտելիքներ: Թեև խրատախոսությունը շատերի համար տհաճ է, բայց տեղին ասված խրատները շատ օգտակար միջոցներ են նոր սերնդին սոցիալականացնելու և կյանքում անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելու համար:

Մոգությունն այն է, երբ մարդուն ասում են՝ վարվիր այսպես, որպեսզի տեղի ունենա այսինչ իրադարձությունը, մինչդեռ այդ երկուսի միջև իրական փորձնական, առավել ևս՝ պատճառական կապեր չկան: Օրինակ՝ եթե մենք երեխային ասենք. «Ձեռքդ հեռո՛ւ պահիր կրակից, մի՛ այրվի, որպեսզի հայրդ վերադառնա», — ապա դրանով իսկ մոգություն արած կլինենք: Դժվար չէ նկատել, որ մարդիկ կյանքում շատ հաճախ են այդպես վարվում՝ խրատը փոխարինելով մոգությամբ և չնկատելով այդ փոխարինումը: Սա իսկական դրական («սպիտակ») կախարդություն է, քանզի մենք գիտենք, որ երեխայի գործողության (կամ այն կանխելու) և հեռավոր երկիր կամ պատերազմի դաշտ մեկնած հոր վերադարձի միջև որևէ կապ չկա: Հնարավոր է, որ կարգալով այս տողերը՝ ումանք անմիջապես ցանկանան առարկել ինձ, թե իբր այդպիսի կապ գոյություն ունի: Նման դեպքերում պետք է համոզված լինել, որ այդ մարդկանց մեջ սկսեց գործել մոգական հոգե-տրամաբանություն: Կա՞ն արդյոք նման մոգության հավատացողներ մեր այսօրվա հայկական միջավայրում: Անկասկած: Իսկ այդպիսի մոգական պատկերացումները արդյո՞ք փոխանցվում են սերնդեսերունդ: Դարձյալ ոչ մի կասկած չի կարող: Եվ դա էլ էթնիկական սոցիալականացման կողմերից մեկն է, այն կարող է նույնիսկ մոգական դաստիարակություն դառնալ, եթե, օրինակ, ծնողը կամ կախարդը նպատակաուղղված կերպով որոշ մարդկանց սովորեցնում են այդ ամենը՝ նրանց մեջ ձևավորելով այն, ինչ ես մոգական հոգե-տրամաբանություն անվանեցի: Ցանկության դեպքում մենք դրանք կարող ենք մո-

գական խրատներ անվանել, սակայն ավելի լավ է խրատն ու մոգությունը հստակորեն զանազանել: Դա թույլ կտա էթնոհոգեբանական և էթնոմանկավարժական երևույթները հստակորեն տարբերակել մոգական գործողություններից ու ներշնչումներից և խորացնել համապատասխան երևույթների վերլուծությունը:

Եվս մեկ խնդիր, որն արդեն նշանակություն ունի ոչ միայն էթնոհոգեբանություն և էթնոմանկավարժություն, այլև ազգային մշակութաբանության համար ընդհանրապես. անհրաժեշտ է ուսումնասիրել ժողովրդական խրատներն ու խրատանիները և դրանցում ջոկել իսկական, սթափ խրատները մոգական ներշնչումներից՝ ինչպես դրականից (կախարհություն, կախարհանք), այնպես էլ բացասականից (մոգարգելք, թաբու): Դա թույլ կտա շատ հետաքրքրական և նոր էթնոմանկավարժական ուսումնասիրություններ կատարել և ընդլայնել էթնիկական սոցիալականացման տեսությունը:

8. ՄՈԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. ՄԵՂՔԵՐԻ ԲԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈԳԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Ե

Մեղքեր քավելու երևույթը գոյություն է ունեցել մինչև համաշխարհային կրոնների (քրիստոնեություն, բուդդայականություն և իսլամի) ծագումը՝ նախնապարյան էթնոսների մեջ, որոնք անիմիստներ և Հեթանոսներ էին:

Մեղքերի քավությունը մոգական գործողությունների բնույթ ունի: Օրինակ՝ Մեքսիկայի գուաիլոյ ցեղի Հնդկացիները, ըստ Ջ.Ջ. Ֆրեդերի, կակտուսի մի տեսակի հետ վարվում էին ինչպես կիսաստծո հետ: Դա կակտուսի այն տեսակն էր, որը համտես արած մարդուն զնում է հափշտակվածության վիճակի մեջ: Քանի որ այդ ցեղի զբաղեցրած տարածքում կակտուս չի աճում, ապա նրա տղամարդիկ արշավներ են կազմակերպում դեպի այլ վայրեր՝ կակտուս գտնելու նպատակով: Պարզվում է, որ այս ցեղի մեջ կակտուս որոնելու հետ կապված բազմաթիվ մոգական գործողություններ կան, հիմնականում՝ մոգարգելքներ (թաբուներ): Դրանցից մեկը հետևյալն է. տղամարդկանց արշավի մեկնելուց

հետո չորս օր անց կանայք հավաքվում են միասին և կրակի Պապին խոստովանում, թե սկսած մանուկ հասակից՝ քանի տղամարդ են սիրել: «Նրանք իրավունք չունեն որևէ բան բաց թողնել, այլապես տղամարդիկ ոչ մի կակտուս չեն գտնի: Որպեսզի ոչինչ չմոռացվի, ամեն մի կին պարանի վրա այնքան հանգույց է անում, որքան որ սիրեկան է ունեցել: Այդ պարանով նա գնում է տաճար և կրակի առաջ կանգնած՝ բարձրաձայն, անուն առ անուն թվարկում է հանգույցներով նշված տղամարդկանց: Խոստովանությունից հետո նա պարանը կրակն է գցում, և երբ «աստվածային անեղծ բոցը» կրանում է պարանը, կնոջ բոլոր մեղքերը քավվում են, և նա հեռանում է խաղաղությամբ: Այդ պահից սկսած՝ կանայք տհաճություններ են թույլ տալիս տղամարդկանց նույնիսկ իրենց կողքով քայլել: Նույն կերպ են իրենց մեղքերը քավում Հենց իրենք՝ կակտուս որոնողները: Կատարած ամեն մի աննշան մեղքի համար նրանք պարանին մի հանգույց են անում և «բոլոր մեղքերը» խոստովանելուց հետո մեղքերի թվարկումով այդ յուրօրինակ Հաշվիչները տալիս են արշավախմբի ղեկավարին, որը այրում է դրանք»²⁴:

Այս դեպքում ևս մենք տեսնում ենք, որ նկարագրված մոգությունները, ամենայն հավանականությամբ, ստեղծվել են բարոյախրատական նպատակներով, իսկ դրանք որսորդության կամ կակտուս որոնելու հետ կապվել երկրորդային բնույթ ունի: Եթե որսի կամ հավաքչության գնացածը գիտե, որ իր բացակայության ժամանակ իրեն չեն դավաճանում, արա նա կդործի ավելի ինքնավստահ ու կենտրոնացած և ավելի մեծ հաջողության կհասնի:

բ. ՄՈԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Այսպիսով՝ կան մոգություն տեսակներ, որոնք կապվում են մարդկանց բարոյական վարքի հետ և նրա պահպանի դեր են կատարում: Ջ.Ջ. Ֆրեդերի հիշյալ աշխատության մեջ՝ «Ոսկե ճյուղը» գրքում, բերված են շատ հետաքրքրական օրինակներ, որոնք, սակայն, նրա կողմից էթնոհոգեբանական, առավել ևս՝ էթնոմանկավարժական մեկնաբանություն չեն ստանում: Ահա այդ օրինակներից ևս մեկը, որի նկարագրությունը ցանկալի է ցիտել ամբողջությամբ.

²⁴ Ֆրեդեր Ջ.Ջ., Ոսկե ճյուղը, էջ 34:

«Արևելյան Աֆրիկայի փղորսները հավատացած են, որ եթե իրենց բացակայության ժամանակ կանայք դավաճանեն, փիղը կհարձակվի իրենց վրա, իրենք կզոհվեն կամ ծանր խեղումներ կստանան: Դրա համար էլ, եթե որսորդին լուր է հասնում կնոջ վարքագծի մասին, նա դադարեցնում է որսը և տուն է վերադառնում: Եթե վագոո ցեղի որսորդին անհաջողություն է պատահում, կամ նրա վրա առյուծ է հարձակվում, նա դա վերագրում է իր կնոջ վատ վարքին և կատաղած վերադառնում է տուն: Վագոոյի որսի գնացած ժամանակ նրա կինը չպետք է թույլ տա, որ երբ ինքը նստած է, որևէ մեկը անցնի իր ետևով կամ կանգնի իր առաջ: Նա պետք է քնի երեսնիվայր: Բուլիվիայի մոխոս ցեղի հնդկացին համոզված էր, որ եթե իր բացակայության ժամանակ կինը անհավատարիմ գտնվի, որսի ժամանակ իրեն կկծի օձը կամ հովազը: Այնպես որ, եթե նրա հետ որևէ նման բան պատահեր, ապա կնոջ պատիժը (իսկ հաճախ նաև մահը), անկախ այն բանից՝ նա մեղավոր էր, թե ոչ, անխուսափելի էր: Մովային ջրասամուլրի որս անող ալեուլթը կարծում է, թե անհաջող որսը հետևանք է այն բանի, որ իր բացակայության ժամանակ կինը անհավատարիմ է գտնվել իր հանգեպ, կամ քույրը կորցրել է կուսությունը»²⁵:

Դժվար է կռահել, որ նկարագրված արգելքները ստեղծվել են ոչ այնքան որսի հաջողությունն ապահովելու, որքան կանանց հավատարմության մղելու նպատակով: Որսի հաջողության հետ կապելն ավելի շուտ կանանց վախեցնելու նպատակով է արվել: Իհարկե, այդ էթնոսների անդամները կարող են հավատալ, թե իսկապես կապ գոյություն ունի կնոջ անհավատարմության և ամուսնու որսորդական անհաջողության միջև: Սա մոգություն է: Բայց այլ է մոգական կապի մասին պատկերացման ու հավատի ծագումը: Դա բարոյական նորմերի, ողջախոհության ծագման ուղիներից մեկն է և անմիջապես առնչվում է էթնոսի և նրա մշակույթի ծագման հետ:

Քանի որ սույն աշխատության հաջորդ գլուխներում ես խոսելու եմ կրոնական էթնոմանկավարժության խնդիրների մասին, ապա այստեղ ցանկանում եմ հիշեցնել, որ մոգությունն ավելի հին է, քան կրոնը: Թեև մեզ հայտնի պատմական ժամանակաշրջանում և նույնիսկ հիմա մոգությունն ու կրոնը գրեթե միահյուսված են, անկասկած եղել է մի

ժամանակ, երբ մոգությունը գոյություն է ունեցել, իսկ կրոնը՝ ոչ: Որպես մասվոր կառույց (տեսություն) և որպես գործնական ակտիվություն, պրակտիկա՝ մոգությունն ավելի պարզ է, քան կրոնը: Երևույթների միջև ըստ նմանության և ըստ սահմանակցության զուգորդություններ ստեղծելն ավելի հեշտ է, քան թե Աստծո գաղափարն ու նրան վերագրվող հատկություններն ըմբռնելը: Այս տեսակետին էր նաև ակնափոր աղագագետ Զ. Ֆրեզերը²⁶:

Մոգական մտածողության արդյունքներից մեկը ցանկալին իրական համարելն է: Այս երևույթի տեսակները բազմաթիվ են՝ սկսած մանկական տարբերակներից մինչև մեծահասակների մոտ պահպանված ձևերը: Օրինակ՝ սին խոստումներ տալը, իմ կարծիքով, հենվում է մոգական մտածողության վրա: Կան մարդիկ, ովքեր իսկապես հավատում են, որ եթե որևէ բան խոստանան, անպայման կանեն, կամ խոստացածը ինչ-որ կերպ տեղի կունենա: Բայց նման մարդիկ խոստանում են՝ առանց հաշվի առնելու իրենց իրական ուժերը: Ստախոսության առնվազն մեկ տեսակ կա, որը, իմ կարծիքով, պայմանավորված է մարդկանց մեջ մոգական մտածողության անկայությանը և անզամ գերակայությանը՝ գիտական մտածողության համեմատությանը: Դա կարելի է մոգական ստախոսություն անվանել:

Նշենք նաև, որ մոգական մտածողության և սոցիալականացման ուսումնասիրությունը հնէահոգեբանության (պալեոսոցիոլոգիա) զարգացման ուղիներից մեկն է. կարևորագույն մի գիտություն, որի զարգացումը, սակայն, ընթանում է չափազանց դանդաղ:

²⁵ Նշվ. աշխ., էջ 33:

²⁶ Նշվ. աշխ., էջ 69:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազաթանգեղոս, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914:
2. Ալիշան Ղ., Արշալույս քրիստոնեության հայոց, Վենետիկ, 1920:
3. Ալիշան Ղ., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1981:
4. Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր զարգացման պատմություն, հ.1, Երևան, 1959:
5. Դրիժո Ա., Մինց Լ., Մարդիկ և սովորույթներ, Երևան, «Լույս», 1987:
6. Հարությունյան Ս.Բ., Հայոց հին վիպաշխարհը, Երևան, «Արևիկ», 1987:
7. Խորենացի Մովսես, Պատմություն Հայոց, Երևան, «Հայաստան», 1968:
8. Նալչաջյան Ա.Ա., Էթնիկական հոգեբանություն, Երևան, «Զանգակ-97», «Հոգեբան», 2001:
9. Սիմոնյան Յ.Ռ., Հայ մանկավարժության պատմություն, Երևան, 1998:
10. Փափստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, «Հայաստան», 1968:
11. Ֆրեզեր Ջ.Ջ., Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան», 1989:
12. Леви-Строс К., Печальные тропики, М., “Наука”, 1984.
13. Малиновский Б., Магия, наука, религия, М., 1998.
14. Тайлор Э.Б., Первобытная культура, М., Политиздат, 1989.
15. Этнография, под редакцией Ю.В. Бромлея и Г.Е. Марикова, М., “Высшая школа”, 1982.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Գլուխ 1. Նախնադարյան էթնոմանկավարժություն և էթնոգենեզ	
1. Գիր չունեցող էթնոսների էթնիկական սոցիալականացման միջոցները	4
2. Հայոց էթնոգենետիկ առասպելի ազգային-մանկավարժական արժեքը	8
3. Էթնոմանկավարժական երկու տեսակի համակարգ	12
4. Էթնոմանկավարժական համակարգ. Բրազիլիայի նամբիկվարա ցեղի օրինակով	15
5. «Տղամարդկանց տները» էթնիկական սոցիալականացման միջավայր	20
Գլուխ 2. Մոզություն, տոտեմիզմ, ժողովրդական մանկավարժություն	
1. Տոտեմ, թաբու և մանկավարժություն	22
2. Մոզության ժամանակների ժողովրդական մանկավարժություն	24
ա. Գիտելիքների երկու համակարգ	24
բ. Վարկած գիտելիքների այդ համակարգերի ձևավորման մեխանիզմների մասին	25
3. «Ներքին» և «արտաքին» բացատրություններ և մոզություն	28
4. Մոզության ֆունկցիաներն ու մեխանիզմները	30
ա. Մոզության ֆունկցիաները	30
բ. Մոզության մեխանիզմները	31
5. Մոզության հոգե-տրամաբանությունը ժողովրդական մանկավարժության մեջ	32
6. Մոզությունը՝ սոցիալականացման միջոց	34
ա. «Մոզական սոցիալականացումն» այսօր	34
բ. Մոզությունը և երեխայի ծնունդը	36
գ. Սաղթանքներ և մոզական էթնիկական սոցիալականացում	38
7. Խրատ և մոզություն	41
8. Մոզություն և բարոյականություն	42
ա. Սեղքերի քավությունը մոզական գործողություն է	42
բ. Մոզությունը՝ բարոյականության պահապան	43
Գրականություն	46

ԱԼԲԵՐՏ ՆԱԼՉԱՋՅԱՆ

ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Պրակ երկրորդ

Հրատարակչության գլխ. տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնօրեն՝ ՄԱՇԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ ԱՐԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ ՍԱՐԳԻՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Սրբագրիչ՝ ԱԶՆԻՎ ՆԱՍԼՅԱՆ

Տպագրությունը օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 3.5 տպ.մ.: Տպաքանակը՝ 500:



«Ձանգակ-97» հրատարակչություն
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8
Հեռ.՝ (+3741) 54 89 32, (+3741) 54 05 17: Ֆաքս՝ (+3741) 54 06 07
Էլ. փոստ՝ zangak@arminco.com
«Ձանգակ-97» հրատարակչության տպարան